№ 150 ՈՒՐԲԱԹ 11 ՅՈՒԼԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ 11 ՅՈՒԼԻՍԻ № 150

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատեղը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պիտի վճարել 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պատիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թ.ի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻՆԱՐԱՐ կը ստանան հետեւեալ 2 գրքերից մէկին ու մէկը. «Դր. ԱՐԾՐՈՒՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձին։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԷԿՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՒ ԷԿՍՊԵԴԻՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ծալվող վրաններ, ճանապարհորդական մահճակալներ, քնելու համար պարկակոտաւ (ամառային եւ ձմեռային, անթափանցիկ), սեղանատան պարագաներ (մանեերկաներ), լապտերներ, ճանապարհորդական տափակ շշեր, զգեստներ, կօշիկներ, գէտրեր, փաբաբաներ, ձեռնափայտեր, ակնոցներ, շրէմներ, կակուղ ապիտակեղէն, պայուսակներ, կոմպէկտներ—մահճակալ, սեղան, աթոռ, վանիա եւ լուացարան, բոլորը կատարելագործված եւ տանելի:

ԵՂԲ. ԱԼՃՎԱՆԳ

առ. 697. 1—1

Ղարաբաղի Հ. Հոգ. Թեմ. Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1914/15 ուսումն. տարվանից հրաւիրվում են բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ ուսուցիչներ՝

ա) Կրօնական առարկաների (աստուածաբան). այս առարկաների դասատուն գուցէ ունենայ նաև 6 ժամ հայոց պատմութիւն, 18—24 դաս։
բ) Հայոց լեզու և գրականութիւն—գուցէ նաև 2 դաս Հայաստանի աշխարհագ.՝ 20—22 դաս։
գ) Ընդհանուր պատմութիւն և գերմաներէն—գուցէ նաև Ռուսաստանի աշխարհագրութիւն 2 դաս, կամ ռուսաց պատմութիւն 4 դաս՝ 18—22 դաս։
դ) Բնագիտութիւն և աշխարհագրութիւն՝ 22 դաս։
ե) Ռուսաց լեզու—գուցէ նաև Ռուսաստանի աշխարհագրութիւն՝ 21—23 դաս։
զ) Մաթեմատիկա՝ 22 դաս։
է) Տեսչի օգնական՝ 18 դասով։
ը) Մի վերակացու, որը կարող է ունենալ նաև ստորին դասարաններում ռուսաց լեզուի դասեր։

1) Բարձրագոյն կրթութիւն ունեցողներին տրվում է 70 ռ. դասագին։
2) Գէօրգեան հոգևոր ճեմարանն աւարտածներին՝ 55 ռ.։
3) Միջնակարգ դպրոց աւարտածներին՝ 45 ռ.։

Լեզուների դասատուներն ստանում են գրաւորների համար առանձին վարձատրութիւն—մինչև Գ. դասարանը 20 դասի համար 132 ռ., Դ—Զ դաս.՝ 150 ռ.։
Իսկ մաթեմատիկայի դասատուն 22 դասի համար ստանում է 132 ռ., որպէս գրաւորների վարձատրութիւն։
Դաստիարակութեան համար ուսուցիչներն ստանում են 100 ռ. վարձատրութիւն։
Տեսչի օգնականին տրվում է 500 ռ.։
Վերակացուին 600 ռուբլի։
Խնդիրների հետ ներկայացնել ուսման վկայականներն ու ցուցակ ծառայութեանը այս հասցէով. Шуша, Ректору Карабагской Арм. Духовн. Семинаріи Газару Теръ-Газарянъ.

առ. 683. 4—4

ԳՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի

Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ։
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 a. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.

(ս. մ.) առ. 391. 100—32

ՑԻՐԿ
Փ. ԻՒՊԱՏՕՎԻ

Այսօր, ուրբաթ, յուլիսի 11-ին արտիստական մեծ ներկայացում։ Նոր արտիստների դէբիւտներ։ Ներկայացման վերջը՝ գլուխտօրների մարտ։ Այսօր կը կայանայ հետաքրքրական ըմբշամարտ՝ 1) Կովկասի չեմպիոն ըմբիշ Ցէրաձէի և Թիւրքիայի անյաղթ ըմբիշ Հակիբ-Սուլէյմանի միջև. 2) կօղակ Դօբրուչի և հայ ըմբիշ Կարա-Զամուհօվի միջև. 3) երևանցի ըմբիշ Իվ. Գոդաշվիլիի և Լիտվինօվի միջև (վճռական). 4) կուրլանդացի Կօրչի և մալօրօս Ցարենկօվի միջև։

695. 1—1

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվիլ կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ԷԿՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԵՒ ԷԿՍՊԵԴԻՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ծալվող վրաններ, ճանապարհորդական մահճակալներ, քնելու համար պարկակոտաւ (ամառային եւ ձմեռային, անթափանցիկ), սեղանատան պարագաներ (մանեերկաներ), լապտերներ, ճանապարհորդական տափակ շշեր, զգեստներ, կօշիկներ, գէտրեր, փաբաբաներ, ձեռնափայտեր, ակնոցներ, շրէմներ, կակուղ ապիտակեղէն, պայուսակներ, կոմպէկտներ—մահճակալ, սեղան, աթոռ, վանիա եւ լուացարան, բոլորը կատարելագործված եւ տանելի:

ԵՂԲ. ԱԼՃՎԱՆԳ

առ. 697. 1—1

Ղարաբաղի Հ. Հոգ. Թեմ. Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1914/15 ուսումն. տարվանից հրաւիրվում են բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ ուսուցիչներ՝

ա) Կրօնական առարկաների (աստուածաբան). այս առարկաների դասատուն գուցէ ունենայ նաև 6 ժամ հայոց պատմութիւն, 18—24 դաս։
բ) Հայոց լեզու և գրականութիւն—գուցէ նաև 2 դաս Հայաստանի աշխարհագ.՝ 20—22 դաս։
գ) Ընդհանուր պատմութիւն և գերմաներէն—գուցէ նաև Ռուսաստանի աշխարհագրութիւն 2 դաս, կամ ռուսաց պատմութիւն 4 դաս՝ 18—22 դաս։
դ) Բնագիտութիւն և աշխարհագրութիւն՝ 22 դաս։
ե) Ռուսաց լեզու—գուցէ նաև Ռուսաստանի աշխարհագրութիւն՝ 21—23 դաս։
զ) Մաթեմատիկա՝ 22 դաս։
է) Տեսչի օգնական՝ 18 դասով։
ը) Մի վերակացու, որը կարող է ունենալ նաև ստորին դասարաններում ռուսաց լեզուի դասեր։

1) Բարձրագոյն կրթութիւն ունեցողներին տրվում է 70 ռ. դասագին։
2) Գէօրգեան հոգևոր ճեմարանն աւարտածներին՝ 55 ռ.։
3) Միջնակարգ դպրոց աւարտածներին՝ 45 ռ.։

Լեզուների դասատուներն ստանում են գրաւորների համար առանձին վարձատրութիւն—մինչև Գ. դասարանը 20 դասի համար 132 ռ., Դ—Զ դաս.՝ 150 ռ.։
Իսկ մաթեմատիկայի դասատուն 22 դասի համար ստանում է 132 ռ., որպէս գրաւորների վարձատրութիւն։
Դաստիարակութեան համար ուսուցիչներն ստանում են 100 ռ. վարձատրութիւն։
Տեսչի օգնականին տրվում է 500 ռ.։
Վերակացուին 600 ռուբլի։
Խնդիրների հետ ներկայացնել ուսման վկայականներն ու ցուցակ ծառայութեանը այս հասցէով. Шуша, Ректору Карабагской Арм. Духовн. Семинаріи Газару Теръ-Газарянъ.

առ. 683. 4—4

ԱՆՍԱՀՄԱՆ ԱՊԵՐԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Թայֆայական մամուլը վերջերս մի սանձարձակ և տպերասան արշաւանք է սկսել էջմիածնի այժմեան ըէժիմի և Դէորգեան ճեմարանի դէմ, չը քաշվելով նոյն իսկ բօյկոտ յայտարարել այն ուսուցիչների դէմ, որոնք կը յանդգնեն ուսուցչական պաշտօն ստանձնել ճեմարանում։

Մանաւանդ զզուանքի հանող անպատկառ մի արշաւանք է սկսվել կաթողիկոսական դիւանապետ Բագրատ եպիսկոպոսի դէմ, թէ իբրև ճեմարանի տեսչի և թէ իբրև դիւանապետի դէմ։

Եթէ թայֆայական մամուլի այդ ապերասան և սանձարձակ արշաւանքի մէջ լինէր ճշմարտութեան, իրաւացիութեան գոնէ ամենաչնչուագ մի բաժին, մենք կը յանդիմանէինք նրա չափազանցութեան մասին և իրաւունք կը տայինք ամենանուազ բաժնի ճշմարտութեան համար։ Բայց ներկայ արշաւանքը թայֆայական նեղ, գծուծ շահերից բղխած մի կեղտոտ արշաւանք է, որովհետև էջմիածնի այժմեան գահակալը և նրա դիւանը յուսախաբութեան մատնեցին թայֆայականներին, որոնք ընտրելով Գէորգ Վ-ին այն յոյսն էին տածել, թէ նա իր ամբողջ ըէժիմով կը դառնայ կոյր և հլու գործիք թայֆայական շահերի առաջխաղացման համար։

Արշաւանքին որևէ հաւանականութիւն ընծայելու համար, թայֆայական մամուլը չէ քաշվում թելել և յերիւրել ամենաանպատկառ ստութիւններ, ինչպէս, օրինակ, այն լուրը, թէ ճեմարանից արձակված են ուսանողներ և աշակերտներ, թէ Բագրատ եպիսկոպոսը կօնդակով նորից կարգվել է տեսուչ և այլն, մինչ ոչ մի աշակերտ և ուսանող չէ արձակվել ճեմարանից և Բագրատ եպիսկոպոսը շարունակ հրաժարական է ներկայացրել Կաթողիկոսին, բայց չէ արձակվել, մինչև որ նշանակվի նոր տեսուչ։

Թայֆայական հոսանքը և մամուլը խղճի ամենայն անզորրութեամբ օգտվում է և շահվում էջմիածնից և Կաթողիկոսից, աղերսելով, հայցելով նրա միջնորդութիւնը, երբ խնդիրը վերաբերում է իւրայիններին և թայֆայական շահերին, բայց, չը տեսնված ապերախտութեամբ, նա անարգում, հայհոյում է էջմիածինը և նրա գործիչներին, երբ տեսնում է, որ իր այս կամ այն ցանկութիւնը չիրագործվեց։

Կրկնում ենք, եթէ խնդիրը վերաբերէր որևէ սկզբունքի, եթէ գործված լինէր որևէ անարդարութիւն, մենք կը լսէինք և նոյնպէս կը քննադատէինք էջմիածնի ըէժիմը, որի գլխավորը նոյնիսկ «Մշակի» կաթողիկոսական կանդիդատը չէ եղել, բայց ուրվեհան արշաւանքը բղխում է անձնական և կուսակցական նեղ, գծուծ շահերից, որովհետև նա չունի որևէ արդար հիմք, որի վրա կռթնէր, մենք մեր բարոյական պարտքն ենք համարում զգուշացնել հայ հասարակութիւնը, որպէսզի սա չը մոլորվի թայֆայական մամուլի բարձրացրած վայնասունից և այն մի խումբ անձանց աղաղակներից, որոնք վերջերս հանդէս են եկել և կամենում են աւելի կամ նուազ լեգալ միջոցներով մի դիկտատուրա ստեղծել էջմիածնի գլխի վրա և ազգային գործերը վարել իրանց կուսակցական շահերի և պահանջների համաձայն։

Մենք յոյս ունենք, որ «Մշակի» զգաստացուցիչ ձայնը իր բարերար ներգործութիւնը կունենայ հայ հասարակութեան վրա, որ նողկանքով յետ կը մղի իրանից բօյկոտի գաղափարը, որովհետև բօյկոտ հրատարակել ճեմարանի դէմ, դա նշանակում է բօյկոտ հրատարակել լոյսի, ուսման, կրթութեան դէմ, դա նշանակում է հայ մատաղ սերունդը ոգիտութեան ճիրաններին մատնել։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՅՄԷՏԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԿՆՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 յուլիսի

ՊԱՐԻԶ.—Շարունակվում է Կայոյի դատավարութիւնը։ Կայոն շարունակելով իր ցուցմունքները, նա կանգ է առնում Բօշէի գործում իրան մեղադրելու և ֆրանս-գերմանական դաշնագրի հարցի վրա։ Նա յայտնում է, որ անհրաժեշտ է դատավարութիւնը ընդհատել որոշ ժամանակամիջոցով։ Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ ունեցած դաշնագրին, նա ձգտում է վերջնականապէս Մարոկկոն Ֆրանսիայի կողմը հատատել և խաղաղութիւն պահպանել։ Եթէ հարկաւոր վեն նաև ապացոյցներ՝ կը ներկայացնի, իր արարքները արդարացնող, սակայն վերջին դէպքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևանքները։

ՊԱՐԻԶ.—Այն զաղտնի դոկումենտը, որ միջադէպ առաջացրեց Լաբօրիի և դատախազի միջև, գտնվում է Կօնդօյի վերաբերմամբ Կայոյի արած բանակցութիւնների մասին եղած հեռագրի մէջ։ Դոկումենտը իբր թէ բովանդակում է բանակցութիւնները Կամբոնի հետ ընդհատելու խորհուրդ, որովհետև Կայոն առաջարկում է աւելին։ Գերմանական դեսպանութեանը մօտ մարդկանց շրջանում վճռականապէս հերքվում է հեռագրի այդպիսի բովանդակութիւն ունենալը։ Նիստի սկզբում դատախազը յայտնում է, որ ինքը լիազօրված է բացատրելու, որ Պուանկարէին յանձնված թղթերը իսկապէս գոյութիւն չունեցող դոկումենտների պատճէններ են, որոնց վրա յենվելով չէ կարելի յարձակվել Կայոյի պատուի և պատրիոտիզմի վրա։ Այնուհետև խիստ բացատրութիւններ են լինում Կայոյի և «Ֆիգարօ» թերթի վարչութեան նախագահ Պրեստի միջև Կայոյի երէկվայ բացատրութիւնների առիթով, որոնք վերաբերում էին «Ֆիգարօյի» գերմանական գործերի հետ կապ ունենալուն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
9 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Ֆրանսիական պրեզիդենտ Պուանկարէն Պետերբուրգի աղքատների օգտին նուիրաբերել է 50,000 ֆրանկ։

Պուանկարէի շքախմբի անդամներին Բարձրագոյնս շնորհված պարգևատրանքներ։

ՊԱՐԻԶ.—Ֆրանսիական բոլոր թերթերը մեծ համակրութեամբ են խօսում Թագաւոր Կայսրի և Պուանկարէի տեսակցութեան և արտասանված ճառերի մասին։

ՊԱՐԻԶ.—Մամուլը շարունակում է համակրութեամբ խօսել Թագաւոր Կայսրի և Պուանկարէի տեսակցութեան ու ճառերի մասին։

ԹԷՀՐԱՆ.—Յուլիսի 9-ին կայացաւ ողջոյնի (սելամի) կարգը։ Շահին երդվեցին կառավարական և հասարակական հիմարկութիւնների ներկայացուցիչները, բախտաւորների խաները և վաճառականութիւնը։

Կ. ՊՕԼԻՍ.—Այս օրերս մեծ վէճերը գընում է Եւրոպայ, այնտեղի կուրօրտներից մէկում Վենիզէլոսի հետ տեսակցելու և կղզիների հարցը լուծելու գաղթականների համար։

ԼՕՆԴՕՆ.—Բուկինհէյմի պալատում կօնֆերենցիան բանալով, թագաւորը շնորհակալութիւն յայտնեց պարլամենտի անդամներին նրա համար, որ նրանք եկել են իր հրաւէրով, և ասաց, որ թէև այդ բանը հանդիսանում է նորութիւն, բայց բացառիկ հանգամանքները արդարացնում են թագաւորի արարքը։ «Այսպիսի ժամանակում, երբ «քաղաքացիական պատերազմ» խօսքերը գտնվում են պատասխանատու և լուրջ մտածող մարդկանց շրթներին, իմ անհանգստութիւնը այդ աղէտի հանդէպ խորանում է դէպի Իրլանդիան ունեցած սիրով և դէպի նրա ազգաբնակութիւնը տածած համակրութեամբ»։ Վերջում թագաւորը յոյս յայտնեց, որ խորհրդակցութիւնը կը յանգի խաղաղութեան և կը նպաստի վէճերը հարթելուն։

ԴՈՒՐԱՑՅՈՒ.—Կօսսօվոյից եկել են Իսայ Բօլատինացի մարդկանցից 240 հոգի։ Նրանց խումբը մի քանի երդեր երգեց կառավարչի պալատի առջև։

Դուրացցոյում անբաւականութիւն և տրտունջ է լսվում նոյն իսկ ազգայնականների շրջանում։

Դիւանագէտների շրջանում մեծ խօսակցութեան առարկայ է դարձել մի դեսպանի տուած խորհուրդը կառավարչին այն մասին, որ նա հեռանայ Ալբանիայից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—(Պաշտօնական)։ Քաղաքապետի դիւանատունը յայտնում է, որ ամիս 8-ին գործի չեն կանգնել զանազան գործարանային ձեռնարկութիւնների և տպարանների ծառայողներից մօտ 80,000 հոգի։ Գործարանային բայօնում բանւորները ուզեցին խմբվել, յեղափոխական երգեր երգել, էլեքտրաքարշը կանգնեցնել և այլն, բայց ոստիկանութիւնը ցրեց նրանց։ Տօբոլսկայա փողոցում ընդհարում եղաւ, որի ժամանակ մի կողակ և երկու բանւոր թեթև վիրաւորվեցին։ Ձերբակալվեց 52 մարդ։

ՄՕՍԿՎԱ. — Էլեքտրաքարշի երթևեկութիւնը կանգ է առել։

ՐԻԳԱ.—Գործադուլ արին 70 գործարանի և ձեռնարկութիւնների բանւորները թւով 40,000 հոգի։

ՐԻԳԱ.—Գործադուլ արին 13,000 բանւոր։

ՁԵՆՍՏՕԽՕՎ.—Երկարատև երաշտից յետոյ չը տեսնված փոթորիկ եղաւ կարկուտով ու հեղեղով, որի ժամանակ կայծակի բազմաթիւ հարուածներից մի քանի տեղ հրդեհներ առաջացան։ Այրվեցին տներ, խանութներ և գործարաններ։ Հեռագրաթելերը վնասվել են։

ՊՕԼՏԱՎԱ.—Կայծակը նահանգում սպանեց 34 մարդ։

ՍՄՈԼԵՆՍԿ.—Այրվեց Լիտվինի սղոցարանը։ Վնասը հանում է 100,000-ի։

ՍՕՖԻԱ.—Վերջին օրերի անձրևները մեծ հեղեղներ առաջացրին, որոնք ահագին վնասներ տուին։ Մինչև այժմ գտնվել են ջրահեղձների 100 դիակ։ Ենթադրում են, որ զոհերի թիւը շատ շատ է։ Վնասները միլիոնների են հանում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԼԵԿՏՐԱՔԱՐՇԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ինչպէս յայտնել էինք մեր թերթի երէկվայ համարում, յուլիսի 9-ի առաւօտից էլեքտրաքարշի ծառայողները գործադուլ են արել։ Նրանց պահանջները արդէն յայտնի են «Մշակի» ընթերցողներին։ Գործադուլի նախօրեակին ծառայողների պատուիրակութիւնը խնդրեց թոյլատրել ժողով գումարել, որը և չը թոյլատրվեց որոշ նկատումներով։ Ամսիս 9-ի առաւօտեան ժամը 6½-ին բանւորները սպասում էին ընկերութեան վարչութեան պատասխանին, որ և ստացան հետևեալ պատասխան յայտարարութիւնը, այն է՝ որ ընկ. վարչութիւնը անցեալ տարվայ սեպտեմբերի գործադուլի ժամանակ կրած նիւթական վնասներից յետոյ այժմս չէ կարող բաւարարել ծառայողների 26 էկտերից բաղկացած պահանջները։

Ծառայողները, կարդալով այդ պատասխանը, ցրվեցին տները։ Էլեքտրական կայարանում գործը իսկոյն դադարեցվեց։ Գործադուլ են արել մօտ 900 ծառայող։ Անօնիմ ընկ. օրական վնասը հաշվում են 3½-ից մինչև 4000 ռուբլի։ Կենտրօնական կայարանում, մեքենաները ծառայողների կողմից վնասվելու երկիւղից, ոստիկանական ոյժեր են կանգնեցված։ Սլաքներին պահապան են կանգնեցված դռնապանները։ Բանակցութիւններ են վարում երկաթուղային բաւալիսի հետ՝ ժամանակաւորապէս էլեքտրաքարշը բանեցնելու։ Ոստիկանապետը իր կողմից առաջարկում է տասնեակ քաղաքապետներ, որոնք ծանօթ են էլեքտրաքարշի գործին։ Նախանցեալ օրը և երէկ քաղ. վարչութիւնը ճանապարհորդների տեղափոխութեան գործը կազմակերպեց, 40 լինէյկա թողնելով փողոցները։ Գործադուլը առ այժմ առաջ է գնում խաղաղ կերպով։

Յուլիսի 9-ի երեկոյեան և 10-ին էլեքտրաքարշի սակաւաթիւ վագոններ գործում էին գծերի վրա, որոնց կառավարում էին քաղաքապահները և ոստիկանական այլ պաշտօնեաներ։ Գործադուլի մասին հեռագիր է տրված Բելգիա։ Նախանցեալ օրը, ցերեկվայ ժամը 3-ին, էլեքտրաքարշի վարչութիւնը բաց է թողել երկրորդ յայտարարութիւն, որի բովանդակութիւնն այն է, թէ՝ որովհետև ծառայողները ինքնակամ թողել են գործը և չեն ցանկանում ենթարկվել գոյութիւն ունեցող ծառայական պայմաններին, այդ պատճառով յայտնվում է, որ մինչև յուլիսի 12-ը գործի չը կանգնող ծառայողները համարվում են արձակված ընկ. ծառայութիւնից։

Գործադուլաւոր բանւորներից երէկ ձերբակալվեցին 17 հոգի։

Հ. Դ. ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ

Հոգեբաշաթի, յուլիսի 9-ին, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի քաղ. դումայի դահլիճում կայացաւ Ժողովրդական Տան Հայկ. Դրամատիկ. Խմբակցութեան անդամների ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին 75 անդամ։ Ժողովը միաձայն նախագահ ընտրեց Հ. Առաքելեանին և քարտուղար Եր. Խարազանին։

Ժողովը բացվելուց յետոյ կարդացվեց նախորդ ժողովի արձանագրութիւնը, որից յետոյ ժողովը անցաւ օրակարգի խնդիրներին։ Վարչութեան անդամ Ա. Նազարէթեան մանանշելով Զուբալովների արած ծառայութիւնները ժողովրդական թատրոնին, որից օգտվում է և Հ. Դ. Խմբակցութիւնը, առաջարկում է Խմբակցութեան պատուաւոր անդամներ ընտրել Կոնստանդին Զուբալովի որդիք Եակով և Լեոն Զուբա-

լոգիներին։ Ժողովը բուռն ծափերով ընդունում է այդ առաջարկը։ Յետոյ պատուաւոր անդամ ընտրվեց դրամատիկ. նախկին սեկցիայի պատ. անդամ Նիկ. Ամիրաղեան։ Ապա ժողովը ընդունեց Զուբալօղլիներին հեռագրով յայտնելու իրանց պատուաւոր անդամ ընտրելու մասին եղած առաջարկը, որից յետոյ կարդացվեց վարչութեան 1913—1914 թ. գործունէութեան զեկուցումը, ապա 1913/14 թ. թատերաշրջանի հաշուառութիւնը և վերատուգիչ յանձնաժողովի զեկուցումը։

Վարչութեան անդամ Ա. Նազարէթեան ընդարձակ բացատրութիւններ տուեց վերատուգիչ յանձնաժողովի նկատած պակասութիւնների մասին, ասելով որ այն թերութիւնները, որ բերված են վեր. յանձ. զեկուցման մէջ, եղել են առաջ, բայց յետագայում հարթվել է ամեն ինչ։

Այնուհետև նախագահը առաջարկից ժողովականներին, արտայայտվել վարչութեան գործունէութեան և հաշի մասին։ Թեր և դէմ կարծիքներից յետոյ, ժողովը հաստատեց վարչութեան հաշիւը։

Յետոյ կարդացվեց խմբակցութեան 1914—15 թ. նախահաշիւը, որի համաձայն խմբակցութիւնը այդ թատերաշրջանում մուտք սպասում է 7875 ր.։ Ծախսվելու է նոյնքան։

Փոքր վիճաբանութիւնից յետոյ, ժողովը հաստատեց և նախահաշիւը։

Յետաձգվեց կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխութեան խնդիրը, անդամների լրիւ թիւ չը լինելու պատճառով։

Այնուհետև ժողովը անցաւ խմբ. վարչութեան անդամների ընտրութեան։ Առաջարկված թեկնածուներից գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին հետեւեալ անձինք.—տիկին Վ. Մամուլեան (65 սպ. 8 սև), Միք. Ստամբոլցեան (60—9), Ստ. Գալստեան (55—15), Աբ. Նազարէթեան (55—11), Յովհ. Մալխասեան (50—19), Աղ. Էլիզբարեան (47—19), Եր. Խարազեան (36—32) և տիկ. Վ. Արովեան (34—33)։

Ժամանակը ուշ լինելու պատճառով վարչութեան փոխանդամների և վերատուգիչ յանձնաժողովի անդամների ընտրութիւնը թողնվեց հետեւեալ ժողովին։

ՄԻ ԷՋ ԹԻՖԼԻՍԱԲՆԱԿ ՋԱՀՈՒԿԵՑԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Հին-Նախիջևանի գաւառի Զահուկ գիւղի շինականներից բացի մեր կովկասահայ իրականութեան մէջ հազիւ թէ գտնվի գիւղական մի այլ համայնք, որ այնքան օտարութեան մէջ ապրող և օտարութիւնը սիրող լինի։ Զահուկեցիներն իրանց նիստ ու կացով ու նահապետական սովորութեամբ այն աստիճան ետ ընկած են, որ տարբերական իսկ հասկացողութիւն չունեն իրանց քայքայիչ ապրելակերպի մասին։

Թիֆլիսի համարեա ամենայայտնի քարվանսարաներում և հիմնարկութիւնների մէջ դուք կը գտնէք ջահուկեցիներ, որոնք տասնեակ տարիներով ծառայում են մեծ մասամբ մշակութեամբ և՝ իրանց ծննդավայրից երկար բացակայելու պատճառով ամեն ինչ մոռացութեան են տուել, և շատերի անճաշակ ընտանիքն ու զաւակները՝ ստիպված՝ քարշ են գալիս իրանց ամուսնու կամ հօր հետ մութ ու խոնաւ բնակարաններում, տալով ի հարկէ բազմաթիւ զոհեր՝ մանաւանդ մատաղահաս երեխաներից։

Հայ-Թուրքական ընդհարումներից յետոյ՝ դրանց թիւը եռապատկվել է, և օր ըստ օրէ դատարկվում է Զահուկն իր ընիկներից, որոնք գնալով աւելի հեռու քաղաքներ ի հարկէ անդարձ կորչում են իրանց հայրենիքի համար։ Այդ հեռացող ջահուկներից մի քանիսը Թիֆլիսի հեռաւոր քաղաքամասերում հողեր են գնել՝ մշտական բնակութիւն հաստատելու համար, իսկ գիւղում իրանց ունեցածը չնչին գնով վաճառել են Թուրքերին ու հեռացել։

Իրանց համար փառք և պատիւ համարելով մշակութիւնը մի որևէ հիմնարկութեան մէջ, ջահուկեցիները չեն խնայում ոչ մի միջոց՝ կարելին չափ տրրանալ... մէկը միւսի տեղը, թէկուզ դա լինի փողի ոյժով, որ ձեռք են բերում գժուարութեամբ և մեծ տոկոսով։

Իրանց համագիւղացիների այդ վատթար սովորութեանը վերջ տալու համար՝ մի քանի բանիմաց երիտասարդներ քանիցս խորհել են մի ելք գտնելու, սակայն ապարդիւն, որովհետև նախաձեռնող երիտասարդներն անհաստատակամ են եղել ու վախեցել անտեղի բամբասանքներից։

Վերջերս ջահուկեցի երիտասարդներից մէկը միտք էր յղացել հայրենասիրական միութիւն կազմելու, նպատակ դնելով գիւղում մի շարք հանրօգուտ գիտելիքներ տարածել և բարոյական ազդեցութիւն ունենալ օտարութեան մէջ ապրողների վրա՝ վերջիններիս թիւը պակասեցնելու դիտաւորութեամբ։ Բայց այս անգամ էլ՝ նախորդների նման՝ չիրականացաւ այդ բարի միտքը՝ շնորհիւ տաքարիւն մի քանի երիտասարդների։

Մեծ նախանձի տէր լինելով յիշածս գիւղի երիտասարդութիւնը, նրա զրոյցի նիւթը եղել է իրանից բարձր պաշտօն ունեցողների, հարևան գիւղացիների առաջադիմութեան մասին անվերջ խօսել, և միմիայն խօսքով է բարձր դասում իրան, այլ ոչ գործով։

Օրինակներ բազմաթիւ են։

Ջահուկի հարևան գիւղերում, շնորհիւ տեղացի երիտասարդների, կան հիմնված գրադարաններ, սպառողական խանութներ, գիւղատնտեսական գիտելիքներ տարածող ընկ., որը դիւրութեամբ գիւղատնտ. գործիքներ է մատակարարում գիւղացիներին։

Նոյնիսկ մի գիւղում մտադիր են լուցկու գործարան շինել և այլն։

Եւ այդ բոլորը գիտէ ջահուկեցին, թէ գիւղինը և թէ այստեղինը, բայց, ինչպէս վերև ասացինք, բացի նախանձի խօսքերից մատը մատին չէ խփում։ Կարմ-Աղա

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քանաքիւղ

Շահալի (Լոռու գաւ.), 6 յուլիսի

Այսօր ժամը 8-ին առ. գիւղս ժամանեցին գաւառական բժ. Միրզայանը ու քննիչը՝ քննելու սպանված Ռուշան Վարդումեանի վէրքերն ու սպանութեան շարժառիթները։ Իսկոյն անցան գործի։ Մարմինը, որ ամսա 3-ին պահ էր տրված հողին (գերեզմանը չէր կնքված), հանեցին և մեր առաջ մեկնեցին մի հսկայ մարմին... Ես իմ աչքով տեսայ մի ահագին կտրուածք գլխին, որը հասել էր ոսկորին, և մի խորը վէրք ձախ կողմը փորի տակը։ Բժշկի յայտնութեամբ՝ մահացու վէրքը եղել է փորի հարուածը, որ խէնջալը կտրել է աղիքները. իսկ գլխինը՝ գերանդիով։ Նոյնպէս մահացու։

Պարզվեց, որ սպանողները եղել են երկու հոգի. առաջինն զարկը գերանդիով (դէպքը տեղի է ունեցել խոտահարքում) Եղիշէ Վարդումեանի, իսկ խէնջալինը Արշակ Վարդումեանի (սրանք էլ եղբօր որդիք են իրար հետ), որոնք սպանել են իրանց մօտիկ ազգականին... Անկարագրելի են այն լացն ու կոծը, այն վայնասունը, այն աղեխարշ աղաղակները, որ բարձրացրել էին հանդուցեալի կինն ու որդիքը և այլ մերձաւորները, որոնք արտի կսկծից իրանց երեսներն էին պատռտել. արիւնլուայ ա՜րել...

Սակայն գիւղացիների մեծագոյն մասը, որոնց արամադրութեանը ծանօթացայ, աշխատում էր քննչին այնպէս անել, որ ոճրագործները ազատվեն, կամ պատիժները թեթեւացնեն...

Եւ տենդային ջանք էին գործ դնում կաշառել վկաներին, «տեսնել» բժշկին ու քննիչին և այլն...

Իսկ հանդուցեալի մեծ որդին՝ Լիւդվիկ Վարդումեանը թախանձագին խնդրում էր անաչառ քննութիւն, որպէսզի մարդասպանները չազատվեն, որը կարող էր նոր մարդասպանութիւնների առիթ լինել։

Եւ իրօք, մեր գիւղացիութեան համար իրօնիկական մի տեսակ ցաւ է դարձել յանցագործներին—լինի դրանց արարքը գողութիւն, մարդասպանութիւն և այլն—կաշառներով, սուտ վկաներով ազատել իշխանութեան ձեռքից և կամ գտնէ նրանց կրելիք պատիժը թեթեւացնել։ Իսկ յանցագործներն էլ, նկատելով որ գողութիւն անելով մի քանի ամիս, մարդ սպանելով՝ 1—2 տարի պիտի պատժվին, ամենափոքր հակառակութեան դէպքում անգամ չեն վարանում ոճիր գործել, որը նորանոր վրէժխնդրութիւնների առիթ է դառնում...

Կարս. Դաղարեան

Գիւղական առաջադիմութիւն

Քարվանսարա (Դաղ. գաւ.), 29 յունիսի

Քարվանսարան վերջին 6—7 տարվայ ընթացքում բաւականին մեծ փոփոխութեան է ենթարկվել թէ իր մաքրութեամբ և թէ ներքին բարեկարգութիւններով։

Մի տասնեակ տարի առաջ շինութիւններն ու փողոցները խառնիճաղանճ վիճակի մէջ էին, զուրկ ամենայն մաքրութիւնից, ծածկված կեղտով ու անասունների աղբով. տեղական աղբիւրների ջրերը չէին զովացնում չարքաշ գիւղացու այրված սիրտը. փողոցները զուրկ էին գիշերային լուսաւորութիւնից, այնպէս որ մութից երեկոները դուրս գալը մի առանձին դժուարութիւն էր ներկայացնում։

Ներկայումս ամեն ինչ բարեփոխված է շնորհիւ տեղական տանուտէրի, որ ահա վեցերորդ տարին է, ինչ պաշտօնավարում է։ Օտար

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ամառները Կարսի քաղ. զբօսավայրը զարդարվում է տեղացի և օտարական ուսանողներով, որոնք իրանց փայլուն ուսադիրներով, պսպղուն համազգեստներով և իրանց վառվռուն շարժուածքներով զբաւում են հասարակութեանը, մանաւանդ կաւալէը որոնց ռուսագէտ ուսանողուհիներին։

Սրանցից որը աւարտել է, արդէն գործ է փնտռում, որը շուտով աւարտելու յոյսով սպասում է ճակատագրի վճռին։

Թողնենք, մատների արանքով նայենք, որ այդ ուսանողներից ոմանք թէ մի փոքր հպարտ են, մի փոքր կոպիտ և մի փոքր էլ որպէս ջահել երիտասարդ՝ ջահելութեան ոչհամակրելի ձևեր ունեն՝ ման գալու, խօսելու և վիճելու մէջ, այո, թողնենք այդ մանր-մունր պակասութիւնները և դառնանք բուն խնդրին։

Ինչպէս ամեն տարի, նոյնպէս և այս տարի մի քանի անգամ ուսանողական խորհրդակցական ժողովներ եղան իրանց գբաղանի վրա մտածելու։ Ծրագիր են կազմում մի շքեղ զբօսանք սարքելու քաղ. այգում յօգուտ ուսանողների։

Ի հարկէ ես դէմ չեմ բարեգործական նպատակով տարբված այդպիսի մի զբօսանքի, բայց և այնպէս աւելորդ չեմ համարում նկատել, որ զբօսանքից գոյացած արդիւնքը արդար կերպով չէ բաժանվում, ինչպէս հաւատացնում են գործին մօտիկ մարդիկ։

Կան ուսանողներ, որոնք թէև ուսանողական համազգեստ են կրում, բայց համալսարանի երես չեն տեսնում, կամ երկար ընդհատումներով են սովորում. սրանք էլ են բաժին ստանում։ Կան ուսանողներ, որ նիւթապէս ապահովված են. սրանք էլ բաժին են ստանում։ Կան ուսանողներ, որոնք ոչ յարգելի պատճառներով թողնում են ուսումը և վերադառնում հայրենիք հանպատանալու. սրանք էլ բաժին են ստանում։

Իմ կարծիքով՝ եթէ կարիք կայ յօգուտ ուսանողների մի զբօսանք կազմակերպել, թող հասարակութիւնը գործի գլուխ կանգնի, թող ուսանողները հեռու կանգնեն և գոյացած արդիւնքը չը տրվի ուսանողներին՝ թէ «գնացէք քէֆ արէք»։ Ո՛չ, այդ ձևը արդարութիւն չէ. չը պէտք է փողը տալ իրան ուսանողին, այլ պէտք է հետաքրքրվել և իմանալ, թէ նա երբիսի անյուսաձգելի կարիքներ ունի, և անձամբ հոգալ. մէկը գրքեր չունի, միւսը ուսման վարձ չէ տուել, երրորդը հագուստ չունի; չորրորդը հիւանդ է և այլն. ահա այս կարիքները պէտք է հոգալ և փող չը տալ այն ուսանողին, ով կարիք չունի։

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

Կարս

ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Որ մեր երկրի իւրաքանչիւր հատուածը, գաւառը լուրջ ուսումնասիրութեան չէ ենթարկվել, որ ամեն մի քայլ հողի հետ կապված է մի հարուստ պատմութիւն, դա չէ կարելի հերքել։ Մեր գաւառի մասին տեղեկութիւնները միշտ եղել են պատահական, թերի, ուսումնասիրութեան կարօտ։

Թէպէտ ձեռնհաս անձինք պակաս չեն մեզանում, որոնք կարող էին այդ շահեկան գործին ձեռնարկել, սակայն նրանց մեծ մասը զբաղված է ուրիշ գործերով, ինչպէս նաև նրանց մի մասը ստիպված է ապրուստի համար աշխատել։ Ինչպէս ասացինք, մեր գաւառի մասին տեղեկութիւնները միշտ եղել են պատահական, թերի, ուսումնասիրութեան կարօտ։

Թէպէտ ձեռնհաս անձինք պակաս չեն մեզանում, որոնք կարող էին այդ շահեկան գործին ձեռնարկել, սակայն նրանց մեծ մասը զբաղված է ուրիշ գործերով, ինչպէս նաև նրանց մի մասը ստիպված է ապրուստի համար աշխատել։ Ինչպէս ասացինք, մեր գաւառի մասին տեղեկութիւնները միշտ եղել են պատահական, թերի, ուսումնասիրութեան կարօտ։

Թէպէտ ձեռնհաս անձինք պակաս չեն մեզանում, որոնք կարող էին այդ շահեկան գործին ձեռնարկել, սակայն նրանց մեծ մասը զբաղված է ուրիշ գործերով, ինչպէս նաև նրանց մի մասը ստիպված է ապրուստի համար աշխատել։ Ինչպէս ասացինք, մեր գաւառի մասին տեղեկութիւնները միշտ եղել են պատահական, թերի, ուսումնասիրութեան կարօտ։

Թէպէտ ձեռնհաս անձինք պակաս չեն մեզանում, որոնք կարող էին այդ շահեկան գործին ձեռնարկել, սակայն նրանց մեծ մասը զբաղված է ուրիշ գործերով, ինչպէս նաև նրանց մի մասը ստիպված է ապրուստի համար աշխատել։ Ինչպէս ասացինք, մեր գաւառի մասին տեղեկութիւնները միշտ եղել են պատահական, թերի, ուսումնասիրութեան կարօտ։

Թէպէտ ձեռնհաս անձինք պակաս չեն մեզանում, որոնք կարող էին այդ շահեկան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Ռուս մայրաքաղաքների հայ գաղութի ազգօգուտ հիմնարկութիւններից առաջին տեղը բռնել է և այժմ էլ ունի իր որոշ նշանակութիւնը Լազարեան ճեմարանը։

Թէ որքան օգուտ է տուել այդ կրթական հիմնարկութիւնը հայ ազգութեանը, դուցէ կարիք էլ չը կայ ասելու, այնքան ակնյայտ է այն։ Բաւական է յիշել, որ նա կեանք է առել 1815 թ-ին, այն ժամանակ, երբ համատարած խուլ խաւարի ու անգիտութեան գրկում ողջ Հայաստանը արնաքամ ջղաձգութեամբ գալարվում էր կսկծի և ուշաթափ ցաւի ուժգին հարուածից, որից նա կարող էր ազատվել ոչ միայն բազուկի ոյժով, այլ և գլխի լոյսով։ Այդ նպատակով էլ նա կեանք էր եկել և ծնել մի սերունդ, որ լուսի արդարացրել է այդ նպատակը։ Զափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ մեր վերածնութեան երկրորդ շրջանի, աշխարհաբար լեզուի յաղթանակի հզօր զօրավարների, բառի բուն նշանակութեամբ գրական-հասարակական գործիչների առաւելագոյն մասն այդ հիմնարկութեան մէջ է մարզվել և նոյնիսկ պաշտօնավարել ու գործել։ Ներկայիս մեր մտաւորականութեան խոշոր մասն են կազմում այդ տաճարի սաները։ Թիշնք մի քանիսին. Էմին, Ս. Նազարեան, Ս. Շահազիզ, Մ. Նալբանդեան, Ն. Դելեանեան, Գ. Քանանեան, Ռ. Պատկանեան, Ա. Զանչեան, Կ. Եզեան, Ս. Մանդինեան, Յ. Յովհաննիսեան, Բերբերեաններ, Աճեմեան, Գ. Խալաթեան, Գ. Զալուշեան, Զարեքեան, Ա. Քիշմիշեան և այլն. զօրականներ՝ Լօրիս-Մելիքեան, Տէր-Դաւիթեան, Լազարեան, Տէր-Աստուրեան և այլն։

Լազարեան ճեմարանն այժմ պետական հիմնարկութիւն է, իր մէջ պահել է շատ քիչ բան այն ամենից, ինչ նա պիտի լինէր հիմնադիրների զաղափարի համաձայն, և չի անում հիմա այն, ինչ արել է առաջ։ Այդ կրթական տաճարի կեանքն ունի այն ընդհանուր կողմը, որ այդտեղ ամենայն ճշդութեամբ անդրադառնում է 18-դ և 19-րդ դարերի հայ կեանքը, առանձնապէս ռուսահայութիւնը։

Դա ռուսահայ կեանքի իսկ ու իսկ պատճէնն է. նոյն ցանկութիւնները ու իղձերը, վարվեցողութիւնն ու ձգտումները մէկ կողմից՝ հայութեան. նոյն խոստումներն ու առանձնաշնորհումները, հավանաւորութիւնն ու արատաւորութիւնը միւս կողմից՝ պետութեան. նոյն յուսախաբութիւնն ու զրկանքը, դատարկ և ունայնաձեռն դրութիւնը առաջին տեղում. նոյն խաբելն ու իրաւազրկելը և իր նպատակներին ծառայեցնելը երկրորդում. ահա զուգահեռել, որ ճշգրտօրէն կրկնվում են այդ երկու կեանքում, այդ երկուսակներում։

Թող ներվի մեզ այդ տեսակէտով էլ մօտենալ ճեմարանի պատմութեան։

Այն օրերին, երբ ծնունդ էր առնում ճեմարանը, բոլոր հանգամանքներն ու պայմանները գալիս էին ընտրելու, որ նա դառնալու էր հայ լուսաւորութեան կենտրոնը, կատարելու այն դերը, որ մասամբ կատարել են Վենետիկի և Վիէննայի Մխիթարեանք։ Այդ սև օրերին բուն երկրում, ուր քարը քարի վրա չէր կարող մնալ և ամեն մի օր իր հետ բերում էր անսպասելի եղեռն, հնար չը կար և խիստ անյուսալի էր սկիզբը դնել կուլտուրական ձեռնարկութեան։ Անդրկովկասի մեծ մասը և բուն հայկական նահանգները դեռ հեծվում էին Թիւրք-պարսկական լծի տակ։ Պատահական չէ, որ մեր վերածնութեան զարկ տուող գլխաւոր հիմնարկութիւնները մայր երկրից դուրս՝ կուլտուրական կենտրոններումն էին առաջ գալիս։ Հայութեան համար այդպիսի մի վայր լինելու Մոսկվան այդ ժամանակ յարմարագոյններից էր, իբրև կուլտուրական կենտրոն, և այն բանով, որ այդտեղ բնակութիւն էին հաստատել շատ նշանաւոր հայ ընտանիքներ, ժամանակի գիտակից, ուսումնական հայ անձեր։ Ստեղծվել էր այն մթնոլորտը, որ ընդունակ էր առաջացնելու խոշոր կուլտուրական երևոյթ, ի հարկէ, ժամանակի հասկացողութեամբ հայ կեանքի համար։

Լազարեան ճեմարանը հիմնվում է երեսուն հոգու դաստիարակութեան համար։ Այդ թիւն այժմեան հասկացողութեամբ չնչին է. բայց այն ժամանակ մեր կեանքում խոշոր երևոյթ էր։ Մեր վանքերը, որ միակ վարժարաններն էին հանդիսանում, թւով աւելի աշակերտ չեն ունեցել։ Թէ Լազարեան ճեմարանը նրա լուսամիտ հիմնադիրների բաղձանքների համաձայն ժամանակի հետ առաջ գնալով՝ վերածվելու էր հայկական բարձր կրթական հիմնարկութեան, համալսարանի, և միակ այդ նպատակով էլ հիմնված էր, պարզ երևում է նրանց բոլոր գործերից, գրութիւններից ու կարգադրութիւններից, որ կը տեսնենք յետագայում։ Այդ դաղափարը, որ այնքան պարզ ու յայտնի է եղել հիմնադիրների օրերում, նրանց մահից յետոյ ձախորդ պայմանների ներգործութեամբ հետզհետէ խաւարում է ու մթնում. վերջապէս կորցնում է ճեմարանը իր առանձնայատուկ ազգային գոյնը և 1872 թ-ի կանոնադրութեամբ դառնում պետական բարձրագոյն դպրոց, պահելով անցեալ նուիրական դաղափարի միայն հետքերը։

Լազարեան ճեմարանի կեանքը անվերջ փոփոխութիւնների է ենթարկվել. այնքան կամք ու ձեռք են դիպել և խառնվել այդ կեանքին, այնքան տարբեր ազդեցութիւններ է նա կրել իր ընթացքում, որոնց հետքերը երկար ժամանակ չեն ջնջվել, որ դժուար է ասել, թէ երբ է վերջացել մէկը և սկսվել միւսը։ Այնու ամենայնիւ աչքի են ընկնում մի քանի շրջաններ, որ ուրոյն գոյներով զատվում են իրարից։ Մեր նպատակն է տալ այդ միատարփոփոխի այն ֆազիսները, որոնց ենթարկվել է ճեմարանը սկզբնական օրերից մինչև վերջնական ձևակերպումը, այն է 1815—1872 թ.։

Տեղի ունեցած այն գլխաւոր և ուժեղ ազդակների և ներգործութիւնների համեմատ, որ ճեմարանի կեանքին այս կամ այն ուղղութիւնն են տուել, այդ կեանքի պատմութիւնը յիշեալ սահմաններում բաժանում ենք չորս գլխաւոր շրջանների, 1) սկզբնական հայկական շրջան. 2) Բենկենդորֆեան շրջան. 3) Օրլովեան շրջան. 4) Անորոշ կամ խառն շրջան։

Ա. շրջան (1815—28)

Այս շրջանում Լազարեան ճեմարանը եղել է առաւելապէս գիշերօթիկ դպրոց երեքդասեան, ապա չորեքդասեան, հաւասար ժամանակի գիմնազիաների, որոնք նոյնպէս չորս-դասեան էին։ Սկզբում հիմնադիրն ինքը Յովհաննէս Լազարեանն է կառավարում դպրոցը, ապա 1818 թ-ից յանձնում իր որդոյ՝ Յովհաննէս և Խաչատուր Լազարեանցներին. առաջինն ստանձնում է հոգաբարձուի պաշտօն, երկրորդը տնօրէն։

Երկդասեան շրջանում աւանդվում էին հետեւեալ առարկաները. ա) կրօնագիտութիւն (միայն հայ դաւանութեան), բ) տրամաբանութիւն, գ) լեզուներ՝ հայերէն, ռուսերէն, լատիներէն, ֆրանսերէն և գերմաներէն, դ) գրականութիւն այդ բոլոր լեզուների, ե) իրաւունք, զ) մատեմատիկական առարկաներ, է) աշխարհագրութիւն և վիճակագրութիւն, ը) պատմութիւն, թ) նկարչութիւն և կաքաւումն (պարիր)։

Դպրոցը իր բացման օրից մօտ հինգ տարի յետոյ՝ 1820 թ. բաղդ է ունենում տեսնել իր առաջին շրջանաւարտներին։ Այդ աջող դէպքը, անկասկած, մեծ ուրախութիւն առիթ գործել, որը նորանոր վրէժխնդրութիւնների առիթ է դառնում...

Կարս. Դաղարեան

Դր.-ընթերցարանի կանոնաւորումն

Ցարսկիէ-Կօլօցին, 7 յուլիսի

Կովկ. Հ. Բար. Ընկ. տեղիս ճիւղի գր.-ընթերցարանը կանոնաւորվեց։ Գրադարանն ունի այժմ մօտ 600 գիրք։ Գրադարանի գրքերը ձրիաբար կազմեց գրադարանապետ քահանան իր ձեռքով։ Բայց ափսոս, որ գրադարանը միայն անուն է։ Ժողովուրդը չի օգտվում գրքերից ու լրագիրներից, թէև ձրի է։ Կարդում են միայն մի քանի հոգի։ Այս փասը հաստատեցրեց անգամ ապացուցված է, որ մեր ժողովուրդը խոր ընկղմված է խաւարի թագաւորութեան մէջ, և դեռ շատ տարիներ պէտք է անցնեն, որ ժողովուրդը պահանջ զգայ ընթերցանութեան...

Ցարսկիէ-Կօլօցիի հիծելազօրքն ամեն տարի գնում է երկու ամսով Թիֆլիս՝ զինուորական վարժութիւնների համար։ Այս տարի զօրքի գնալու ժամանակ ճանապարհին սատկում են 3 ձի։ Թիֆլիսից Սղնախ գալիս է լինում մի հանրակառք ճանապարհորդներով։ Ճանապարհին ընկած է լինում մի դրագոնի սատկած ձին։ Դիլիժանսի ձիերը, տեսնելով սատկած ձի, խրտնում են և հանրակառքը շուռ են տալիս։ Այս ժամանակ մէկ մարդ մեռնում է, մէկին էլ վիրաւորվում։ N. N.

Գիւղական առաջադիմութիւն

Քարվանսարա (Դաղ. գաւ.), 29 յունիսի

Քարվանսարան վերջին 6—7 տարվայ ընթացքում բաւականին մեծ փոփոխութեան է ենթարկվել թէ իր մաքրութեամբ և թէ ներքին բարեկարգութիւններով։

Մի տասնեակ տարի առաջ շինութիւններն ու փողոցները խառնիճաղանճ վիճակի մէջ էին, զուրկ ամենայն մաքրութիւնից, ծածկված կեղտով ու անասունների աղբով. տեղական աղբիւրների ջրերը չէին զովացնում չարքաշ գիւղացու այրված սիրտը. փողոցները զուրկ էին գիշերային լուսաւորութիւնից, այնպէս որ մութից երեկոները դուրս գալը մի առանձին դժուարութիւն էր ներկայացնում։

Ներկայումս ամեն ինչ բարեփոխված է շնորհիւ տեղական տանուտէրի, որ ահա վեցերորդ տարին է, ինչ պաշտօնավարում է։ Օտար

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ամառները Կարսի քաղ. զբօսավայրը զարդարվում է տեղացի և օտարական ուսանողներով, որոնք իրանց փայլուն ուսադիրներով, պսպղուն համազգեստներով և իրանց վառվռուն շարժուածքներով զբաւում են հասարակութեանը, մանաւանդ կաւալէը որոնց ռուսագէտ ուսանողուհիներին։

սում է 200,000-ից աւելի իր սեփական գոյքից և հապա 1816-ին վերջացնում է դպրոցի շէնքը։ Դպրոցը բացվում է 1815 թ. շինութիւնը դեռ չը լրացած։ Կատարվեց թողնված մայր գումարը, որի տոկոսը միայն պիտի ծախսվի դպրոցի վրա, հիմնադիրն աւելացնում է իր միջոցներից այն չափով, որ հնար է լինում դպրոցում պահել ամենայն յարմարութեամբ 30 երեխայ որը և ազքատ հայ ընտանիքներից։

Յովակիմ Լազարեանն՝ իր գործերով զբաղված և ծերացած լինելով՝ դպրոցի անմիջական կառավարութիւնը, ինչպէս յիշել ենք, յանձնում է իր որդոյ։ Յատկապէս Եջմիածնից Սիրեմ կաթողիկոսի կարգադրութեամբ ուղարկված է լինում Սերովբէ գիանական վարդապետը «լինել գործակից որդոյ իմոյ և տեսուչ համալսարանի»։ Ասանդվելիք առարկաների թւում յիշվում է և աստուածաբանութիւն՝ այն մանուկների համար, որ կուզեան նուիրվել հայոց եկեղեցուն, որպէսզի «եկեղեցիք Հայաստանեայց պայծառասցին ուսեալ հոգեւորականօք»։ Դասընթացքը տևելու էր վեց-եօթ տարի։ Աւարտողները իրանց ցանկութեան համաձայն կարող էին մտնել ծառայութեան՝ զինուորական, իրաւաբանական, բժշկական, ուսուցչական և վաճառականական ասպարէզներում։ Յիշվում է, որ ձրիաբաժ աշակերտների թիւը լրացել է, բայց կան և թոշակաւորներ օտար ազգերից. կարող են ընդունվել և թոշակաւոր հայեր։ Դրութեան նպատակը երևում է հետեւեալ տողերից. «Ապաքէն զայս ամենայն նախակարգեալ բանս տեղեկութեան ի լսելիս պատուելի ուսումնատենչ ազգիդ հայոց հառուցանել ի դէպ վարկայ, զի լուսայատարաս օժանդակութեամբ յօժարասէր լիջիք գործակից լինել ճոխութեան և յառաջադիմութեան համալսարանիս։ Ոչչափ կարացի ես փոյթեռանդն կամօք ընծայեցի ի լրումն կրթականութեան երիտասարդաց մերոց. աւելի քան զայս առնելն զձէնդ կախի բոլորովիմբ»։

Այն հանգամանքը, որ այս յայտարարութիւնը լոյս է տեսնում այն ժամանակ, երբ դպրոցն արդէն մի շրջան էր արել, հինգ տարվայ փորձառութիւն ձեռք բերել, երբ հնարաւորութիւն կար դիտելու նրա դրական ու պակասաւոր կողմերը, առաւելութիւններն ու պակասութիւնները, որ դպրոցը յայտարարութեան մէջ կոչվում է համալսարան, պարզ ցոյց է տալիս, թէ գործն ընդհանրապէս աջող ընթացք է ունեցել. խրախուսված հիմնադիրն ընդարձակ

հարցով զբաղվել ու պատմութեանը նիւթ մատակարարել, սակայն դժբաղդաբար այդ պիսիներին պակասում է եռանդ ու կորով։

Կան և որոշ կարգի անհատներ՝ օր. զաւառական ուսուցիչները, որոնց սրտեռանդ ցանկութեանը մի շարք դժուարութիւններ արգելք են հանդիսանում, չը նայած որ այդ ուսուցիչները շատ լաւ էլ ճանաչում են իրանց շրջապատը բոլոր մանրամասնութիւամբ։

Ապա ուրեմն՝ այդ պակառելի աշխատանքը կարող են ի կատար ածել մեր թեմերի առաջնորդները իրանց ստորադրեալ պաշտօնեաներով, ինչպես արդէն մի քանի ժամանակ առաջ սկսել է Ղարաբաղի թեմի կառավարիչ Զաւէն վ. իրան յանձնված հարուստ թեմի՝ մեր երկրի մի խոշոր հատուածի ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրութիւնը, կազմելով բաւականին ճոխ ու մանրամասն տեղեկութիւններով լիակատար մի աշխատութիւն, որի առաջին մասը առիթ եմ ունեցել տեսնելու։ Երկրորդ մասի նիւթը արդէն ծրագրված պատրաստ է, սակայն այդ հատորի մէջ պիտի դրվեն ըստ կարգի երկրի ընդարձակ քարտէզը, նշանաւոր վայրերի պատկերները և այլն։

Գովասանքի արժանի հարուստ տեղեկութիւններով լի մի պատկառելի աշխատանք, որը կարող է ծառայել որպէս պատրաստի նիւթ ազգագրագէտներին և բանասէրներին։ Ինչպես տեսայ, բացի երկրի ընդարձակ տեղեկագրից, այդ աշխատութեան մէջ մանրամասն ծանօթութիւն կայ երկրի ազգաբնակութեան՝ թէ, կուլտուրական պարապմունքի, անցեալ ու ներկայ սովորութիւնների, հաւատալիքների և այլոց մասին։ Հայրենասէրի այդ գործը իր տեսակի մէջ գովելի և օրինակելի է մեր միւս թեմերի համար, մանաւանդ այն հեռաւոր թեմերի համար, ինչպես օր. Հիւսիսային Կովկասի, Ռուսաստանի թեմերի հայ ազգաբնակութեան, նրանց ազգային առանձնայատուկ սեփականութիւնների մասին։

Շնորհաւորելով հ. Զաւէնին այդ պատկառելի աշխատութեան համար՝ կը ցանկանանք շուտով տեսնել մեր աղքատիկ գրականութեան մէջ այդ ուսումնասիրութիւնը հին Արցախի։

Սմբ. Զաքարեանց

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

—

Վեհ. Հայրապետի հաստատութեան արժանացած մեր թեմ. դպրոցների դասացուցակ-ծրագիրը, որով նաև յաջորդականութիւն է մտցվում մեր ստորին և միջնակարգ դպրոցների միջև՝ դիւրացնելով ստորոդների փոխանցումը ծիսականներից դէպի թեմ. կրթարանները, գեղեցիկ առիթ թող լինի, հայ ուսուցիչներ, մեր թեմի դպրոցների աշակերտներից առաջադէմներին և ուշիմներին ընտրելու, պատրաստելու Գէորգեան ճեմարանի, Ներսիսեան դպրոցի համար։

Շամախու թեմի հայ ուսուցիչներ, յայտնի է, որ մեր լայնածաւալ թեմը՝ «որում հունձք շատ են և մշակք սակաւ»՝ թեմ. դպրոց չէ ունեցել և չունի իր՝ իսկական իմաստով։ Զենք ուզում այստեղ այդ երեւոյթի պատճառները քննել։

Մեր թեմի նախորդ առաջնորդը՝ անհասկանալի յամառութեամբ մոռանալով թեմիս շահերը, փոխանակ յարգելու իր նախորդների գեղեցիկ և նախնաւանդ սովորութիւնը, որոնք Գէորգ Դ. կաթողիկոսի ժամանակից սրբութեամբ իրագործում և ճեմարան էին ուղարկում առաջադէմ աշակերտներ թեմին ծառայելու նպատակով, ամեն կերպ ջանաց լցնել թեմը ազէտ քահանայացուների նոր բանոր խմբերով։

Ակներև ցոյց տալու համար, թէ մեր՝ թեմ. դպրոցից զուրկ Շամախու թեմը որ չափով է շահվել Գէորգեան ճեմարանի, Ներսիսեան դպրոցի ընձեռած գիտութեան բարիքներից, մենք կը բերենք մի քանի թուեր։

Ճեմարանը իր բացման տարիներում և յետոյ՝ գլխաւորապէս նախկին առաջնորդների շնորհիւ երբեմն-երբեմն ընդունել է սաներ և Շամախու թեմից։ Առաջին սեռունդներից են բժշկապետ Թ. Զաքարեանը և յետագայում մի ուրիշը, սրանց հետ եղել են և մի քանի ուրիշ սովորողներ, որոնք կամ կիսատ են թողել և կամ աշակերտ ժամանակ մահացել։

Ճեմարանի 25-ամեակը ծանելու շրջանում Շամախու և միւս թեմերի մատակարարած աշակերտների համեմատական թիւը հետեւեալ պատկերն էր ներկայացնում։ Երևանի թեմն ունէր 104, Վրաստանինը և Իմերեթինը՝ 35, Արցախինը՝ 15, Բեսարաբիայինը՝ 5, Աստրախանինը 4, իսկ Շամախունը 6—8 հոգի։ Թէև Շամախու թեմը համեմատած Բեսարաբիայի և Աստրախանի թեմերի հետ, այս վերջիններից՝ առանձին-առանձին վերցրած՝ շատ աշակերտներ է տուել յիշեալ ժամանակամիջոցում, բայց ի նկատի պիտի ունենալ և այն՝ որ Շամախու թեմն աւելի շատ հայեր ունի, և 6—8 հոգի աշակերտներից միայն 4-ը աւարտեցին, այն էլ դպրոցական բաժինը, մնացեալները կիսակատար թողին և հեռացան։ 1900/01 ուսումն. տարուց յետոյ, երբ ճեմարանում ոչ մի աշակերտ չը մնաց Շամախու թեմից, այն ժամանակվայ կոնսիստորիայի նախանդամ Եվրեմ սրբազանի ջանքերով ճեմարան գնացին նոր 6 տղաներ։ Դժբաղդաբար սրանցից 1-ին միայն աջողվեց աւարտել և վերադառնալ հայրենիք. մնացեալ 5-ը կիսակատար թողին-հեռացան։ Այնուհետև վերջին 10-ամեակում ճեմարանը ամուլ մնաց Շամախու վերաբերմամբ մեր նախորդ առաջնորդի չկամութեան պատճառով, չը նայած որ մեր թեմը հաւատներ է տալիս այս նպատակով և ճեմարանում մի բարեբարի տեղասիքներ կան յատկապէս Շամախու թեմից աշակերտներ պահելու համար։

Լռութեան ենք տալիս այն աչքի զարնող հանգամանքը, որ Շամախու թեմը նկատելի չափով կամ բոլորովին չէ օգտվել Ներսիսեան և միւս դպրոցներից։ Մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն՝ առաջինից եղել են միայն 2 հոգի։ Այս թուերի մէջ են մտնում այլ թեմերից եկած այն քահանաներն ու ուսուցիչները, որոնք աւարտել են մեր կրթարանները և պաշտօնավարում են Շամախու թեմում։

Այս մերկ փաստերը տալուց յետոյ, խօսքս ձեզ եմ ուղղում, Բագուի, Շամախու, Ղուբայի, Դերբենտի, Մատրասայի, Սաղիանի, Գիրքի և այլ դպրոցների ուսուցիչներ. մատների արանքով մի նայէք մեր թեմի այս պակասաւոր կողմին. մի տեսակ միջնորդ եղէք և ձեր խնամքին յանձնված ուսումնարանների չորրորդեցիներից առաջադէմներին ի նկատի առէք, պատրաստեցէք և առաջուց խնդիր ներկայացրէք ում հարկն է։ Ուսնորներին, որոնց ապրուստի խնդիրը դժուարութիւն չը տայ ծնողներին, տարէք Ներսիսեան դպրոց, իսկ չքաւորներին՝ ճեմարան։ Մի մոռանաք, որ այժմ գիւղատնտեսական բաժին ևս պիտի մացնեն և ձեր ուշիմ ու խելօք սանիկները պիտի սովորեն հողագործութիւն, անասնապահութիւն, շերամապահութիւն և այլն։ Նրանք զինված որոշ գիտութիւններով մի-մի լուսաւոր ջահ, կուլտուրայի մշակներ և մայրենի լեզուի ծառայմանը նախանձախնդիր գործիչներ պիտի հանդիսանան։ Թող Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեացակամութիւնը, որ թիւրքահայ գաւառներից սովորող պատանիներ է պահանջում ճեմարանի համար, և ընձեռած գիտութիւնը ձեզ քաջալերէնեն, իսկ մեր նոր առաջնորդի բարեացակամութիւնը աւելի ևս եռանդ ներշնչէ ձեզ ձեր ձեռնարկութեան մէջ, որ անշուշտ կը պակվի աջողութեամբ։ Կը գայ ժամանակ, երբ արժանաւորներդ մխիթարված կը տեսնէք ձեզ։

Թ. Բարդաղեան

Շամախի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

✦ Ներքին գործերի մինիստրի օգնական Վ. Ֆ. Զունկովսկի քաղաքում մի օր մնալուց յետոյ, երէկ արագընթաց գնացքով մեկնեց Բագու ուղեկիցների հետ միասին։

✦ Կարճ ժամանակեայ բացակայութիւնից յետոյ Թիֆլիս վերադարձաւ և տանձնեց իր պաշտօնակատար Գ. Դ. Ժուրուլի։

✦ Յուլիսի 15-ին, Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Բուդոլֆի նախագահութեամբ կը կայանայ պոլիտեխնիկումի շտաթները կազմելու յանձնաժողովի վերջին նիստը։

✦ Կովկասի գիւղատնտեսութեան վերատեսուչ Ս. Ն. Տիմօֆէեվը այս օրերս մեկնում է գաւառները գիւղատնտեսական հիմնարկութիւնների գործունէութեան և գիւղատնտեսների կազմի հետ ծանօթանալու։

✦ Երկրագործութեան դեպարտամենտի աւագ-մասնագէտ Ֆ. Ֆ. Կրիշտոֆովիչ վերադարձաւ Գօրուց և այսօր մեկնում Լաղօտաղ որոշ ուսումնասիրութիւններ և հետազօտութիւններ կատարելու։

✦ Արհեստաւորների ակումբի վարչութեան նախագահ է ընտրվել Ց. Ն. Բարսեղեան, գանձապահ Ե. Ս. Մայսուրաձէ և քարտուղար Լ. Խարազեան։

✦ Թիֆլիսի այգեգործական դպրոցը այս տարի աւարտեցին 10 հոգի։

✦ Այսօր, ամսոյ 11-ին, նշանակված է քաղաքային գործերի նահանգական վարչութեան նիստը մի շարք հարցեր քննելու համար։

✦ Դիդուբէի ձրի գրադարանի վարչութեանը թոյլատրված է յուլիսի 12-ին կամ 13-ին, եղանակը վատ լինելու դէպքում 19-ին կամ 20-ին, մի գրօսանք կազմակերպել Վէրայի այգում յօգուտ յիշեալ գրադարանի։

✦ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. մէջ 4 ազատ թոշակ կայ բարձրագոյն դպրոցների ուսանողների համար։

—

ԿՈՎԿԱՍ

✦ Բարձրագոյն ներման են արժանացել Շուշու գաւառի Թաղլար գիւղի բնակիչներ Աւագ Գալստեան, Առաքել Զաքեան և Սայի Կաղրեան, որոնք մեղադրված լինելով «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը պատկանելու գործով՝ Թիֆլիսի դատաստ. պալատի վճռով (ներկայ տարվայ մարտի 4-ին, Գանձակում) դատապարտված էին մշտական աքսորի։

✦ Բագուում տպարանների բանւորները գործադուլ են արել։ Այդ պատճառով Բագուի թերթերը ահա քանի օր է լոյս չեն տեսնում։

✦ Զաքաթալայից հեռագրում են, որ աւազակների հետ ունեցած հրացանաձգութեան ժամանակ, սպանվեցին ստրաժնիկներ Անտոն Գիգօլաշվիլի և Մահմէդ Նուր Մահմա օղլի։ Միջոցներ են ձեռք առնված աւազակախմբին հետապնդելու։

✦ Առաջիկայ օգոստոսի 1-ից Բաթումում բացվում են այգեգործական դասընթացքներ, որը տեւելու է մինչև նոյն ամսի 15-ը։ Որպէս դասախօս հրաւիրված է Թիֆլիսի այգեգործական դպրոցի կառավարիչ Պ. Գ. Մէմա։

✦ Թիֆլիսի գաւառի Ախալքալաք գիւղից յայտնում են, որ հացի բերքը անցեալ տարվանից պակաս է։

✦ Յունիսի 10-ին վերջացան Խմիրում եղած ժողովրդական ուսուցիչների մանկավարժական դասընթացքները։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

✦ Պետերբուրգում յուլիսի 9-ին, զօրծադուլի հետևանքով, լոյս չը տեսան «Рѣчь», «Соврем. Сл.», «Петербург. Курьеръ» և «Колоколъ» թերթերը։ Էլեքտրաքարշի երթեւեկութիւնը կանգ է առել։ «Нов. Вр.»-ն հաղորդում է, որ գործադուլաւորները վնասել են էլեքտրաքարշի մօտ 200 վագոն։ Մի քանի վատմաններ և կօնդուկտօրներ վիրաւորված են քարերով։ Ներքին գործերի մինիստրը անձամբ դիտեց ոստիկանների և բանւորների ընդհարման տեղը։

✦ Պետերբուրգում ձերբակալված են գործադուլաւոր բանւորներից 150 հոգի։

✦ Ինչպես յայտնում են, ներքին գործերի մինիստրը ճանապարհորդութիւն է կատարելու կայսրութեան մէջ ծանօթանալու քաղաքային զեմստվային կարիքների ու տեղական ադմինիստրացիայի գործունէութեան հետ։

✦ «С. Пет. Вѣд.»-ի № 139-ում Միք. Ալեքսէերդեան զետեղել է մի ընդարձակ յօդուած Պետերբուրգի պետական բանկի 1913 թ. գործառնութեան մասին։

Յօդուածում մէջ բերված թւական տեղեկութիւններից երևում է, որ բանկում առ 1-ն յունվար 1913 թ. 174,398 մարդ ի պահուստ դրել են 3,454,008,961 ր. 18 կ.։ 1913 թ. ին 35,851 մարդու կողմից ի պահուստ է ընդունվել 756,386,567 ր. 32 կ.։ Այդ թ. ին 32,945 մարդու կողմից պահանջվում է 555,067,870 ր. 80 կ., առ 1-ն յունվարի 1914 թ. մնում է 177,304 մարդու կողմից ի պահուստ դրված 3,655,327,657 ր. 70 կ.։ Սրանից երևում է, որ, 1912 թ. ի համեմատութեամբ, բանկի 1913 թ. շրջանառութիւնը աւելացել է 201,318,696 ր. 52 կ.։ Այդպիսով բանկում պահվող արժէքների ընդհանուր գումարը անցնում է $3^1/_2$ միլիարդից։

Ի պահուստ տրվող գումարների աւելացումով աւելացել է և բանկի օգուտը գործառնութիւնից։ Այսպէս, օրինակ, 1895 թ. բանկի օգուտը գործառնութիւնից հասել է 219,189 ր. 12 կ.-ի, 1912 թ.՝ 661,200 ր. 27 կ., իսկ հաշուետուութեան տարում՝ 686,023 ր. $12^3/_4$ կոպէկի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բ. Ա. Ց. Ն. Մ. Ա. Կ

Լ. Մելիք-Աղամեանին եւ Գր. Բալասանեանին

—

Թիֆլիս, 5 յուլիսի 1907 թ.

Ձեր շարադրած ու տված բրօշիւրների միջոցով ինձ վրա բարդել էիք մի շարք ծանր մեղադրանքներ։ Սկզբից ուշք չէի դարձնում ձեր յերեւցած զրպարտութիւնների վրա։ Սակայն երբ նկատեցի, որ դուք ոչ մի միջոց չէք խնայում ինձ վարկաբեկելու ու վնասելու համար, ձեզանից առաջինին, իբրև գլխաւորի, Թիֆլիսում երկու հայ օրաթերթերի միջոցով առաջարկեցի 1) Կրօնագիտութիւն (հայ և ռուս դաւանութեանց)։ 2) Քաղաքա-բարոյագիտական առարկաներ՝ ա. տրամաբանութիւն և բարոյագիտութիւն, բ. քաղաքացիական պատմութիւն և վիճակագրութիւն։ 3) Բնագիտական, մատեմատիկական գիտութիւններ՝ ա. թւաբանութիւն, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն և հանրահաշիւ, բ. բնագիտութիւն և բնական պատմութիւն։ 4) Գրականական գիտութիւններ՝ ա. քերականութիւն, ճարտասանութիւն, գեղագիտութիւն, բ. պատմութիւն, աշխարհագրութիւն և հնախօսութիւն։ 5) Լեզուներ՝ ա. եւրոպական—ռուսերէն, լատիներէն, ֆրանսերէն և գերմաներէն, բ. ասիական—հայկական, արաբական, թիւրքական և պարսկական։ 6) Արուեստներ՝ գեղագրութիւն, նկարչութիւն և գծագրութիւն։

1823 թ. ին դպրոցում հիմնվում է «Հայկական հնութիւններ սիրող ընկերութիւն»։ Ծրագրվում է լոյս ընծայել «Փենիկս Հայաստանի» անունով մի հրատարակութիւն, որ լինելու էր Հայաստանի պատմութեան և հնութեան վերաբերեալ յօդուածների ու աշխատանքների ժողովածու՝ թարգմանած ու կազմած ռուսերէն լեզուով։

Այդ ձեռնարկութիւնը մեռնում է իր ստեղծողի՝ Յովակիմ Լազարեանի հետ միասին։

Այս շրջանում ճեմարանի աշակերտութիւնը այնքան է իւրացնում հայ լեզուն և գրականութիւնը, որ հրատարակում է ինքնուրոյն գրուածքներ. յայտնի է աշակերտական երկերից «Մուսայք Արարատեան» ժողովածուն։

Այս հանգամանքներն ևս գալիս են վաստակի կերպով հաստատելու, որ Լազարեան ճեմարանը կոչված է եղել ոչ իբրև լոկ կրթական դպրոցի դեր կատարելու, այլ գիտնական հիմնարկութեան՝ ընդարձակ չափով նուիրված հայ ազգի լուսաւորութեան գործին և նրա կեանքի ուսումնասիրութեան։

Այն միտքը, թէ դպրոցը պէտք է իրաւունքներով օժտված լինի, որ կարողանայ ծաղկել, հանգիստ չէ տալիս հիմնադրին։ Կրկնում ենք, որ այդ միտքը մեծ մասամբ արդիւնք էր շրջապատի, մայրաքաղաքի ազդեցութեան և հոսանքի։ Թոշակաւոր աշակերտների քանակը կախված էր շրջապատող հասարակութեան տրամադրութիւնից և վերաբերմունքից։ Իսկ առանց թոշակաւորների ճեմարանը կը մնար տարբերական դպրոց, որովհետև 30-ից 40 ձրիավարձ աշակերտների համար չէր կարելի միջնակարգ դպրոց պահել իր կարգ ու սարքով, ուր մնաց համալսարան։ Իսկ տարբերական դպրոց պահել, ինչպես ասել ենք, չէր համապատասխանում հիմնադիրների լայն մտքին։ Ինչ էլ որ լինի, պէտք է ձեռք բերել իրաւունքներ։ Լուսաւորութեան մինիստրը, տեսնելով, մեծել էր այդ խնդիրը, անշուշտ այն ներքին պատճառով, որ դպրոցն իր ծրագրով, ոգով ու կազմով տարբերվում էր պետական համապատասխան դպրոցներից։ «Դա մեծ մասամբ հայ մանուկների կրթութեան համար հիմնված դպրոց է և բռնում է առանձին տեղ», նկատում է լուսաւորութեան մինիստր Շէրշովը, հետեւապէս չէր կարող իրաւունքներ տանալ։ Մնում էր կողմնակի ճանապարհով ազդեցութիւնների ոյժով հասնել ցանկացածին։ Այդպէս էլ վարվում են։

1824 թ. ին Յովհաննէս և Խաչատուր Լազարեանցների հետ դիմում է կայսրին մի խնդագրով իր հովանաւորութեան տակը առնելու ճեմարանը և կառավարչապետ Նըշանակելու կոմս Ա. Ա. Արակչէվին, որը ժամանակի ամենաազդեցիկ պետական անձերից էր և Լազարեաններ հետ լաւ յարաբերութեան մէջ էր։ Խնդրագրի մէջ ի միջի այլոց ասված է հետևեալը. «Փորձը ցոյց է տուել, որ այս կրթական հիմնարկութիւնը՝ հիմնված առանձին կանոնների և առանձին մի ազգի համար՝ պահանջում է յատուկ հովանաւորութիւն, առանձին իրաւունքներ ու առանձին կանոնադրութիւն։ Գործի աջող ելքը ապահովելու համար չեն զլանում առաջ բերել նաև Եփրեմ կաթողիկոսի մէջնորդութիւնը կայսրին այդ խնդրի առիթով։ Լուսաւորութեան մինիստրը, օրին յանձնվում է այդ գործը քննել, տիրող կ ըմբռի դէմ չէ գտնում, որ այդ մասնաւոր դպրոցը՝ Լազարեան ճեմարանը յանձնվի պետական օրէնք ստանձնաւորի իշխանութեան։ 1825 թ. յունվարի 17-ին կոմս Արակչէվը նշանակվում է կառավարչապետ. սա իր պաշտօնական թղթում՝ ուղղած հիմնադրին՝ գրում է. «Ձեզ քաղցր է ինձ համար կառավարչապետի կոչումով գործակից լինել դպրոցիդ առաջադիմութեան՝ համաձայն հիմնադիրների բարեբար նպատակների, դպրոցիդ, որ առանձին պատիւ է բերում Լազարեան տոհմին»։

Այս դէպքը, որով իրօք նոր դարաշրջան է սկսվում Լազարեան ճեմարանի համար և որի մասին կը խօսենք քիչ յետոյ, կոմս Արակչէվի օրով մի առանձին հետևանք չէ ունենում։ Այս իշխանը, համաձայն իր խոստման, յիրաւի իր ոյժը գործ չէ դնում ի վնաս դպրոցի, ինչպես այդ կատարվում է յետագայ կառավարչապետի օրով։ Ընդհակառակը՝ դպրոցի բարի անունը աւելի է տարածվում և աւելի շատ թոշակաւորներ քաջում դէպի ինքը. նոյն տարին աշակերտների քանակը հասնում է 75-ի։

Այսպէս՝ կարծես սկսում են արդարանալ Լազարեանների յոյսերը. թւում էր, թէ նրանք գտել էին ուզածը հասնելու իրանց իդեալին. բայց այդ միայն թւում էր... Այս ուրախ տրամադրութեամբ, հանդիստ սրտով վախճանվում է ճեմարանի կառուցանող Յովակիմ Լազարեանը 1826 թ. յունվարի 26-ին։ Նա, այդ իսկական հայ մարդը, ճեմարանի ամբողջ գաղափարի մարմնացումը, իջնելով գերեզման՝ տանում է իր հետ և շատ բան...

Ճեմարանի կեանքի մէջ այնուհետև մի առանձին փոփոխութիւն չէ մտնում մինչև 1828 թ., երբ կառավարչապետ է նշանակվում կոմս Ա. Խ. Բենկենդորֆը։

Ճեմարանի կեանքի առաջին շրջանը այս տեղ էլ վերջանում է։

Այդ շրջանի առանձնայատուկ կողմերն են կազմում նախ այն, որ ճեմարանն ինչպես հիմնվել, այնպես էլ կառավարվել է միմիայն իրանց՝ Լազարեանների անմիջական իշխանութեամբ ու ձեռնարկութեամբ։ Երկրորդ՝ նա հետզհետէ մէկ կողմից լայնացել ու բարձրացել է Մոսկվայի համալսարանի ազդեցութեան տակ, հաւասարվել գիմնազիաներին իր ծրագրով ու կարգերով, բայց ոչ իրաւունքներով։ Միւս կողմից ընդունել է իր մէջ և հիմն դրել այն առանձնայատուկ գծի, որով նա տարբերվում էր իր կարգի դպրոցներից, այն է հայկական առարկաներով, արևելեան բաժնով։

1828 թ. երբ որոշվում է պետական դպրոցները բարեկարգել և որոշ սիստեմի վերածել, կազմվում է կրթական հիմնարկութիւնների բարեկարգութեան յանձնաժողովը, վերջինիս կողմից Լազարեան ճեմարանը պաշտօնապէս անուանվում է «Հայկական Լազարեան Ճեմարան Արևելեան Լեզուաց»։

Պարզ է, որ կատարեալ իրաւունք ունենք այս շրջանը անուանել հայկական։

Ղ. Դերենիկեան

Պետերբուրգ

(Պը շարունակվի)

ցի միջնորդ դատարան, որպէսզի ճշմարտութիւնը մերկապարանոց լոյս գալով, հայ հասարակութիւնը իմանայ, թէ ո՞ւրքան դուք արդար էք և ես մեղաւոր։ Նա (Լ. Մ.-Ա.) խոյս տուեց միջնորդ դատարան կազմելուց ու 1912 թ. սկզբին «Մշակի» № 6-ի մէջ յայտարարեց, որ ինքը միայն պետական դատարանի առաջ դուրս կը գայ ինձ հետ դատվելու, եթէ անհուն մեղաւորութիւն և համարձակութիւն ունենամ դիմել պետական դատարանին։ Ամենևին չէի կամենում ժամանակ կորցնել ձեզանով զբաղվելով, բայց երբ վերջին դառն փորձով համոզվեցի, որ ձեր գրած խսկնուացիաների ձեռքից երբէք հանգիստ չեմ ունենալու, ակամայից վճռեցի ձեզ երկուսիդ հրաւիրել պետական դատարան։ Ահա սրանով յայտնում եմ. եթէ դուք այժմ էլ դեռ պնդում էք այն մեղադրանքների վրա, որ կան իմ դեմ գրած ձեր բրոշիւրների մէջ, լիայոյս եմ ձեր ասպետականութեան վրա, որ էջք մերժի հրաւէրս, կը գաք պետական դատարան, որ ձեր գրածները փաստերով, վկաներով հաստատէք ու ինձ միանգամայն ջախջախէք։ Իսկ եթէ ինչ-ինչ նկատումներով ձեր փափագած պետական դատարանից էլ խոյս կը տաք, այն ժամանակ ինձ հետ ամբողջ աշխարհն էլ իրաւունք կունենայ ասելու, որ դուք զրպարտիչներ էք։

Բաֆալեանց Ս.

—

Մցքոա, 12 յունիսի

Հեռագրով արդէն յայտնված է մամուլին Մցքոա գիւղի ծխ. դպրոցի ուսուցչին կառավարութեան միջոցով պաշտօնից հեռացնելու մասին։ Այդ ուսուցիչը լինելով ինքս, պարտք եմ համարում հասարակութեանը ծանօթացնել խնդրին և իմ ասելիքս ասել։

1913 թ. սեպտեմբերին Մցքոայի դպրոցի հոգաբարձութեան նախագահ Եղիա Միւսէլլիմեանը առաջարկեց ինձ դպրոցի աւուրուսուցչութիւնը։ Ես թիւրքահպատակ լինելով տատանվում էի ընդունել, բայց այդ արգելքի առաջը շուտով առնս. Միւսէլլիմեանը և Սուխումի գործակալը դիմեցին Սուխումի շրջանի կառավարչին խնդրելով իբրև բացառութիւն թոյլատրել ինձ այս տարի ուսուցչութիւն վարել. կառավարիչը արտօնեց գրաւոր կերպով։ Ես, տեսնելով այդ գրաւոր արտօնաթուղթը, վստահօրէն ստանձնեցի պաշտօնս՝ հաւատալով բոլորովին ապահով և օրինական, քանի որ Սուխումի շրջանը առանձին շրջան է, ուրեմն և կառավարիչը վայելում է նահանգապետի իրաւունքներ։

Դասերն սկսվեցին. բայց գիւղն էլ սկսեց խռովվել։ Մի քանի անձնաւորութիւններ Միւսէլլիմեանին տապալելու ցանկութեամբ սկսեցին ջուրը պղտորել և մի օր՝ Միւսէլլիմեանի՝ գիւղից բացակայած ժամանակ, գործակալի ջանքերով, մի սակաւամարդ ժողովում հրաժարեցրին հոգաբարձութիւնը և ընտրեցին նորը։ Մեզ համար միևնոյն բանն էր. մենք շահագրգռված չէինք այդ խնդիրներում և միշտ էլ հեռու ու չէզոք ենք մնացել այդ խառնակութիւնների ամբողջ ընթացքում։

Նորընտիր հոգաբարձութեան նախագահ Հմ. Քուչկանեանը սկսեց մեզ անհանգստացնել, ասելով թէ չի կարելի նախատեսված բիւջէն հայթայթել, և սկսեց մեղադրել նախկին հոգաբարձուներին, որ ուսուցիչներ են հրաւիրել 1525 ր. տարեկան դասապով, մինչ եկամուտները հազիւ 1000 ր. գոյացնեն։ Ուսուցչ. խումբը նրանից որոշ պատասխան պահանջեց, թէ արդեօք պարզ է պետք լինել ոճիրների նկատմամբ, դպրոցը կարող է շարունակել իր ընթացքը թէ փակվելու վտանգ կայ. այս հարցերին հոգաբարձութիւնը պատասխանեց, որ այժմ չեն կարող երաշխաւորել մեր ոճիրների նկատմամբ, իսկ դպրոցի կեանքն էլ շատ կասկածելի է. հաւանօրէն կը փակվի։ Ուսուցիչներս խնդրեցինք, որ գոնէ անհրաժեշտ ծախսերի համար փող տրվի. հոգաբարձութիւնը այդ բոլորովին մերժեց. «Ոչ մի կոպէկ չենք կարող տալ մինչև առաջիկայ ծխ. ժողովը, ուր բիւջէ պիտի տրվի մեզ»։ Եւ այսպէս՝ մեր բոլոր հարցերին ստացանք բացասական պատասխան։

Ծխ. ժողովը գումարվեց և յայտարարեց հոգաբարձական նոր ընտրութիւնը ապօրինի, և այդ մասին բողոք տրվեց առաջնորդին, խնդրելով բեկանել և նոր ընտրութիւն նշանակել։ Իսկ հոգաբարձական գործերը առժամանակ յանձնվեցին գիւղի յարգանքը վայելող մի քանի անձնաւորութիւնների։ Վերջիններս անմիջապէս 150 ր. հաւաքեցին և յանձնեցին մեզ։ Ժողովից անմիջապէս յետոյ հոգաբարձութեան նախագահը՝ «Դուք ինքներդ տեսաք հեռանքը. մենք արդէն այլ ևս ազատ ենք» ասաց մեզ ու հեռացաւ։

Ցունվարի արձակուրդներից յետոյ վերսկսվեցին դասերը. շուտով ստացվեց առաջնորդի գրութիւնը. նա անհեռանք էր թողել ծխ. հայրենքի բողոքը և իրանց պաշտօնի մէջ նորից հաստատել նոր հոգաբարձութեան։ Հոգաբարձուներից երկուսը հրաժարվեցին ընդունել իրանց պաշտօնը, պատճառանելով թէ չեն վայելում համայնքի վստահութիւնը։ իսկ երկուսը՝ Հմ. Քուչկանեանն ու Կար. Թէքնէճեանը ընդունեցին՝ հակառակ ամբողջ ծխականների անվստահութեան ու անհնազանդութեան։

Մենք պասում էինք, որ ստանձնելով իրանց պաշտօնը՝ կը գան դպրոց տեղեկանալու մեր և դպրոցի վիճակի մասին. բայց զուր. վերջապէս մենք մի գրութեամբ խնդրեցինք, որ այցելեն դպրոց։ Եկան։ Եւ նորից նոյն անորոշ խօսքերն ու նոյն կասկածները դպրոցի գոյութեան նկատմամբ. և մեզնից էլ պահանջեցին հարկ եղած զօկումենտները։ Մենք խնդրեցինք, որ «այս երկու օրս մեզ որոշ պատասխան տրվի՝ մնալու ենք թէ ոչ. դպրոցը փակելու էք թէ ոչ։ Երբ այս խնդիրը որոշվի, մենք պատրաստ ենք պէտք եղած թղթերը յանձնել». իսկ ես անձնապէս յայտնեցի, որ իմ թղթերն ու վկայականս վաղուց յանձնված են նախկին հոգաբարձութեան և ներկայ հոգաբարձութեան պատասխանատուութիւն է իր նախորդից ստանալ այդ փաստաթղթերը։ Մեր այս խօսքերի վրա՝ նրանք սիրով խոստացան երկու օրվայ մէջ վերջնական պատասխան տալ։ Անցաւ երկու օրը և յայտնվեց մի նամակ հոգաբարձութեան նախագահի կողմից, որով ինձնից պահանջվում էր ուսուցչ. խմբի թղթերը անմիջապէս յանձնել իրան, հակառակ դէպքում ծանր պատասխանատուութեան ենթարկելու սպառնալիքով։ Այս արդէն վրդովեցուցիչ էր, և ես պատասխանեցի, թէ «նախ՝ դուք ձեր խոստումը կատարեցէք, եկէք մեզ մօտ, պարզեցէք դրութիւնը և ապա թէ ստացէք վկայականները»։

Միւս օրը՝ յունվ. 30-ին եկան և ինձ ու ընկերոջս մի-մի նամակ յանձնեցին։ Ինձ պաշտօնից արձակում էին, մեղադրելով թէ Վեհ. Կաթողիկոսի հրամանին ընդդիմացել եմ. իսկ ընկերոջս առաջարկում էին անմիջապէս ստանալ աւ.-ուսուցչութեան պաշտօնը և մինչև նոր ուսուցիչ հրաւիրվին էլ իմ դասերը որևէ կերպ կարգադրել։

Ես նկատի չառայ այդ կարգադրութիւնը. նախ մաքովս էլ չէր անցել հակառակել Վեհ. Կաթողիկոսի հրամանին և երկրորդ՝ իմ վկայականս յանձնած էի հոգաբարձութեան. ընկերներս էին որ՝ զրուցեցին անորոշութեան պատճառով՝ չը գիտէին ումն յանձնել իրանց փաստաթղթերը։ Մի զաւեշտական կողմ էլ կար. ինձ արձակում են պաշտօնից ու իմ հաշիւներս մաքրելու համար առաջարկում են դիմել Ե. Միւսէլլիմեանին. «ով քեզ վարձել է, նա էլ թող վճարի»։ Ուսուցիչ արձակելու դէպքում հոգաբարձու են Միւսէլլիմեանն էր։ Ես առաջարկեցի նրանց՝ դպրոցից հեռանալ և չը խանգարել դասերը։ Նրանք դիմեցին տանուտէրին, որպէսզի ինձ արգելէ պարապելու։ Տանուտէրը միայն ծիծաղեց։ Եւ նրանք հեռացան զայրացած ու սպառնալիքներ կարդալով։

Այսպիսի անորոշ վիճակի մէջ անհնար էր շարունակել զբաղմունքները. ուստի փետր. 3-ին ուսուցչ. խումբը գիւղի տանուտէրի և դատաւորի ձեռքով ուղարկեց հոգաբարձութեանը վկայականները՝ պահանջելով գրաւոր վստահացում, որ մինչև փետր. 8-ը կը վճարվեն ոճիրները և որ ապագայի նկատմամբ էլ կարող ենք վստահ լինել։

Հոգաբարձութիւնը մերժեց որևէ վստահացում տալ։ Մենք տեսանք, որ դպրոցը գլխովին անտէրութեան է մատնված, որոշեցինք դադարեցնել դասերը, ինչպէս որ արդէն յայտնել էինք հոգաբարձութեան նախապէս։ Մեր այդ քայլը ունեցաւ իր ցանկալի հետևանքը. ժողովուրդը յուզվեց և թափվեց դպրոց, եկան և հոգաբարձուները և, տեսնելով ժողովրդի՝ իրանց դէմ ուղղված զայրոյթը, ղղացին իրանց արածի վրա և մեզ խնդրեցին մի կերպ փակել խնդիրը. առաջարկեցին ինձ ուղարկված հրաժարագիրը նկատի չառնել. երկու օրվայ մէջ մեզ յանձնել 100 ր. և մինչև փետր. 10-ն էլ յայտնել վերջնականապէս, թէ շարունակելու է դպրոցը իր գոյութիւնը թէ ոչ։ Մենք ուրախութեամբ համաձայնեցինք դասերը սկսել և պահանջեցինք իրանց այդ խոստումների գրաւոր վաւերացումը. նրանք ամենայն խօսք տուին առաւօտ կանուխ ուղարկել բոլորը։

Դասերը վերսկսեցինք։ Բայց օրքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ սպասվող գրութիւնների փոխարէն ստացվեցին երկու մեծածաւալ գրութիւններ, որոնցով հաստատում էին իրանց նախկին որոշումները և յորդորում ու խրատում ընկերներս՝ խելք լինել, հակառակ դէպքում իրանք էլ կենթարկվեն պատասխանատուութեան։

Այս արդէն չափից անց էր. մեզ հետ ուղղակի խաղում էին. այլ ևս անհնար էր պարապել։ Եւ դասերը դադարեցրինք։

Բայց ինչով բացատրել հոգաբարձութեան այդ հակասական վարմունքը։ Դրա և ընդհանրապէս չարիքների ու խառնութիւնների պատճառը մի անձնաւորութիւն է, մի դրբսեցի՝ Եղիշէ Տէր-Պողոսեանը, որ գիւղական մի կրպակում ծառայում է միայն այն նպատակով, որ կարողանայ իր անունակն վրէժն առնել Եղիա Միւսէլլիմեանից, խարտակել նրա վայելած դիրքն ու յարգանքը։ Այդ զուտ անձնական կրքից մղված, մոռանալով բանական ու բարոյական հասկացողութիւնները, ամէն գնով, թէկուզ դպրոցի ու գիւղի քայքայման գնով, նա ձգտում է հասնել իր նպատակին, ուստի և անդադար գրգռում թշնամական կրքերը և նոր հոգաբարձուներին ենթարկում իր կամքին։ Եւ հէնց որ տեսնում է, որ վերջիններս մի փոքր սառել են և տարաձիգ են հաշտվելու, նա բորբոքում է նրանց կրքերը, բացատրելով զանազան օրէնքներ և համոզելով նրանց՝ շարունակել պայքարը։ Այս խառնակութիւնների մէջ պակաս դեր չէ խաղացել և Սուխումի գործակալը։

Այս բոլոր դէպքերի մասին մանրամասն զեկուցում ուղարկվեց առաջնորդին թէ ուսուցչական խմբի կողմից և թէ իմ կողմից, խնդրելով շուտափոյթ կարգադրութիւն։

Փետր. 20-ին ստացվեց առաջնորդի կողմից գրութիւն, որով հրաւիրում էր մեզ հեռու մնալ հոգաբարձական վէճերից և շարունակել դասերը։

Գիւղի ծխ. ժողովն էլ 61 ստորագրութեամբ խնդրեց մեզ շարունակել դասերը և մի ազդեցիկ բողոք ուղարկեց Վեհ. Կաթողիկոսին, խնդրելով անմիջապէս արձակել հոգաբարձութեան և նոր ընտրութիւն նշանակել։ Մեր վկայականներն էլ ուղարկվեցին առաջնորդին։

Դասերն սկսվեցին։ Ամեն կողմից ապահով էինք. առաջնորդը չէր ընդունում հոգաբարձութեան ինձ արձակելու որոշումը և որոշ չափով վստահացնում էր մեզ մեր ոճիրների նկատմամբ։ Ի հարկէ համապատասխան կարգադրութիւն էր արված և հոգաբարձութեան։ Վերջիններս սաստիկ դժգոհ էին և զգում էին իրանց պարված, ուստի կրքից կուրացած—ի հարկէ Եղիշէ Տէր-Պողոսեանի դրդմամբ—որոշում են փակել դպրոցը։ և ահա ստանում ենք մի գրութիւն, որով պատուիրվում է մեզ անմիջապէս փակել դպրոցը։ Մենք ի հարկէ անուշադիր ենք թողնում այդ գրութիւնը և շարունակում դասերը, չը նայած յաճախակի կրկնվող սպառնալիքներին՝ փակել տալ դպրոցը կառավարութեան միջոցով։

Եւ ահա մի գեղեցիկ օր՝ հոգաբարձութիւնը յանձնում է ինձ մի գրութիւն, որով հրաւիրվում է դադարեցնել դասերը։ Ես իբրև օտարահպատակ իրաւունք չունիմ ուսուցչական պաշտօն վարելու։

Այս կարգադրութիւնը ինձ զարմացրեց. չէ որ առաջնորդին վաղուց յայտնի էր իմ օտարահպատակ լինելը և թէ Սուխումի շրջանի կառավարչի կողմից առանձին արտօնութիւն ստացած լինելս...

Այս մասին գիւղի հասարակութիւնը հեռագրով նորից յիշեցրեց առաջնորդին, խնդրելով թոյլ տալ ինձ շարունակել դասերս և դպրոցի փակման պատճառը զանալ։ Այս հեռագիրը անպատասխան մնաց։ Տրվեց երկրորդ՝ պատասխանը վճարված հեռագիր նոյն իմաստով. այս էլ անպատասխան մնաց։ Ես շարունակում էի դասերս՝ զգալով ինձ ամեն կողմից ապահով։

Բայց հոգաբարձութիւնը հանգիստ չը մնաց։ Եւ—ի հարկէ Եղիշէ Տէր-Պողոսեանի դրդմամբ—դիմում են գաւառի կառավարչին և սատանում ինձ անմիջապէս պաշտօնից հեռացնելու հրաման և գալիս իրանց ձեռքով յանձնում տանուտէրին։ Էլ ինչ կարող էի անել. թողի դպրոցը և հեռացայ, ի հարկէ ոռճիկիս մի մասը չը ստացած։

Երուանդ Ամատունի

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

—

Վան, 25 յունիսի

Օսմ. երեսփոխ. ընտրութիւնները վերջացան անցեալ շաբաթում ու, ինչպէս արդէն սպասելի էր, ընտրվեցին երկու դուռնաւոր դաշնակցականներ՝ Վռամեան ու Փափազեան, ու մէկն էլ թիւրք՝ Վանի ընդհ. դատախազ Ատադ էֆէնդին։ Ընտրութիւններին մասնակցեցին միմիայն դաշնակցականները. ընդդիմադիր կուսակցութիւններն ու ժողովուրդը ընդհանրապէս ձեռնպահ մնացին. այնպէս որ շատ տեղեր ընտրողների $^1/_{10}$ կամ $^2/_{10}$ մասը հազիւ թէ քուէտուփերին մօտեցաւ։ Սրա պատճառը երկուս է. նախ որ հասարակ ժողովուրդը ընդհանրապէս հիասթափվել է օսմ. երեսփոխանութիւն կոչված մարմնի արդիւնքից, որից ժողովրդի ու երկրի օգտին ոչ մի բարիք չի սպասում և որը—մանաւանդ իթթիհատականների սանձարձակ տիրապետութեան այս շրջանում—իթթիհատի հրամայականի, մի պարզ խամաճիկի դեր է ստանձնել. իսկ երկրորդ պատճառը այն է, որ միւս կուսակցութիւններն անօգուտ են համարում մրցել մի կուսակցութեան հետ, որ ընտրութիւնները աղաղակելու համար առատ դրամ է ծախսում, ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով ու միջոցների մէջ խտրութիւններ չը դնելով, մինչև անգամ դիմելով ծեծի ու սպանութեան։

Այս պարագայում օրինական հողի վրա մրցումն անհնար է դառնում, որովհետև միւս կուսակցութիւնները թոյլ չեն տայ իրանց գործ դնել նման զզուելի միջոցներ և թէ նրանց նման առատօրէն ծախսելու միջոցներից զուրկ են, քանի որ Դաշնակցութիւն կուսակցութիւնն ընտրական յատուկ գանձարկղ ունի, որը գոյանում է ընտրված երեսփոխանի առաջին ամբողջ ամսաթոշակից և միւս ամսաթոշակների տասներորդական բաժնից. ասում են, որ նոյնպիսի հարկ՝ աւելի կարևոր սակով կուսակցական արկղին տալիս են նահանգային ժողովի հայ անդամներն էլ, որոնք պէտք է ընտրվեն մօտիկ օրերում, ըստ հայկական բարեկարգումների հիմնագծի, Վանի և Բիթլիսի նահանգներում կէս առ կէս հայերից։

Այսպիսի պարագայում ի հարկէ անօգուտ է սպասել արժանաւորների ընտրութիւնը, երբ մէկ արժանիք է միայն փնտռվում, այն է՝ լինել դաշնակցական ու ամսաթոշակի մէկ մասը կուսակցական գանձարկղին զիջելու համակերպել։ Սա էր անշուշտ պատճառը, որ նոյն կուսակցութիւնը չամաչեց Բիթլիսի նահանգում մի անծանօթ գաճաճի թեկնածութիւնը դնել Մուսա Զեքալի պէս մի նշանաւոր դէմքի, իր ամբողջ կեանքը հայ ազգի օգտին զոհող մի մարդու հանդէպ, որի ընտրութեան աղաղակելը հայերիս համար նոյն իսկ ազգ. արժանապատուութեան հարց դառնալու էր. բայց կուսակցութիւնը մինչև անգամ նրա դէմ մրցեց, որովհետև նա չէր ենթարկվում իրանց դիսցիպլինային։ Ի հարկէ ներելի է, որ ժողովուրդը ոչ մի օգուտ չը սպասէ այսպիսի հանգամանքներում կատարված ընտրութիւններից և նոյն իսկ այն նահանգային ժողովից, որ կոչված պիտի լինի գործօն տարրը լինել երկրի բարեկարգութեան կարևոր գործում, իսկ սրա համար էլ ուրիշներից գանգատվելու իրաւունք չունենք։

Մարակ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ հայկական վիլայէթների վերատեսուչ Հոֆֆը, այն վիլայէթների, որոնց միջով անցնում է Բաղդադի երկաթուղին և որոնք համարվում են գերմանական ազդեցութեան տակ գտնվող վիլայէթներ, մասնաւոր բանակցութիւններ է վարում գերմանական դեսպանի հետ։ Ենթադրում են, որ գերմանասիրութիւն անող Հոֆֆը ամեն ջանք գործ է դնելու, որպէսզի ճնշի ռուսների ազդեցութիւնը իր տեսչութեանը ենթակայ բայսնում։

✦ Վիէննայի և Բուդապէշտի լրագիրները մեծ յուզմունքով քննում են պատերազմի մասին եղած հարցը և յոյս են յայտնում, որ պատերազմը կը կղզիացվի։ Այստեղ ենթադրում են, որ Ռուսաստանը Սերբիային կը թողնի անպաշտպան։ Արժեթղթերը ընկել են աւելի, քան բալկանեան պատերազմի ժամանակ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Ադստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Նելֆա 5 ժ. 43 ր., Հաջի-Կարուլ 8 ժ. 56 ր. եր., Բաքու 11 ժ. 50 ր. գիշ.։ **Պուսաստր գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Նելֆա 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կարուլ 10 ժ. 40 ր. առ., Բաքու 3 ժ. 22 ր. ցեր.։ **Մարդասար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Ադստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Նելֆա 1 ժ. առ., Հաջի-Կարուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 58 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Ադստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Նելֆա 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կարուլ 3 ժ. 33 ր., Բաքու 7 ժ. 25 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—4 ժ, 58 ր. առ., հասնում է Ադստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Նելֆա 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կարուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բաքու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԳՈՒՍ.—**Պուսաստր գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլովո 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդասար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլովո 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ **Մարդասար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլովո 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ **Խառն գնացքը** № 21 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլովո 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլովո 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԱՍԻԱԹԻ.—**Պուսաստր գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալեքսանդրոպոլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագոնները)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալեքսանդրոպոլ 4 ժ. 18 ր. առ., Ապագիզ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդասար գնացքը** № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալեքսանդրոպոլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 14|13—11ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալեքսանդրոպոլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻ.—**Մարդասար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Խօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժոմ 12 ժ. 48 ր. ցեր.։ **Մարդասար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Խօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժոմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պուսաստր գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.։ **Մարդասար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ **Մարդասար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱՔՈՒՄԻՑ.—**Պուսաստր գնացքը** № 4—9 ժ 30 ր. երեկ։ **Մարդասար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ **Մարդասար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՎԱՆԻՑ.—**Պուսաստր գնացքը** № 4Ա./3—7 ժ. 21 ր. եր.։ **Խառն գնացքը** № 26,27 (IV կարգի վագոնները)—4 ժ. 41 ր. ցեր.։ **Մարդասար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ **Մարդասար** (Կարսից) **գնացքը** № 16|15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդասար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ **Մարդասար գնացքը** № 19/20—7 ժ 5 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վլորոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ.11—12 ժ.

ԱԹԱԲՈՅՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՐԱՍԱՐԴՅԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիճերական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Դ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ցրային և երիխայոց հիւանդութ.։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երիխայոց հիւ.։

Մ. Մ. ԲԵՆԻՄՈՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։

Մ. Գ. ՍԻՆԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկաթ. հիվանդ. և շաքար. երիխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

Ե. Ե. ՑԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուչ. չորեքշաբաթ. ներքին և երիխայոց հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ-ԲԺՇԿՈՒՀԻ ՑԷՐ-ԳԱՐԹԵՆՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ՍԻՆԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Ե. Ե. ՑԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Հրաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Ղաւասարդեան

1. 0-63

ԲԺԻՇԿ

Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Յունիսի 1-ից ընդունում է հիւանդներին ԱՌԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ։ Էլեքտրաբուժական կաբինետ։ Բժշկութեան ֆիզիկական մեթոդներ։

(հ. ու. կ.) 400. 100—32

Դոկտ. ՊԱԼԱՔԵԱՆ

ասիստենտ. Վիէննայի համալսարանի հիւանդանոցում, պատրաստ է Կովկասից եկող հիւանդներին առաջնորդել մասնագէտ պրոֆէսորների մօտ և պէտք եղած դիւրութիւնները ընծայել նրանց։ Հասցէ՝ D-r Balakian. Skodagasse 15, Tür 17. Wien VIII.

(օ. մ.) 696. 8—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՆԻ

ԾԱԲԼԻ

Սեղանի 1913 թ.

Գելիկա. 1912 թ.

Էկտրա 1911 թ.

Կօրդիալ 1910 թ.

Պարզի համ ուշնցող եւ բարձր յատկութեամբ գինիներով հեպատրէրվոր գինիներից

ԱՄԵՆՈՒՐԻՑ ԴՈՒՔԱՆԴԵԼ

680. 100—5

Թիֆլիս, Լօրիս-Մելիկովսկայա, № 22.
Տել. ֆօն № 17—48.

Մելիտօպոլի հայոց եկեղեցու համար հարկաւոր է մի ձայնաւոր և ձայնագրագէտ

ՍՊԱՍԱՒՈՐ

(ցանկալի է ամուրին), որ հմուտ լինի եկեղեցական բոլոր արարողութիւններին։ Նա պէտք է եկմալեանի կազմած պատարագի արարողութիւնով պատրաստէ առ այժմ մեծաձայն և երգեցիկ խումբ եկեղեցուի երգելու համար. պահանջված դէպքում՝ նաև քառաձայն։ Ամսական 40—50 ռուբ. ռոճիկ, ձրի սենեակ և անոյշ ծխական ոչ բիւնք։ Եթէ նա առաջարկված պայմաններին համապատասխան չը լինի, քահանան արձակում է նրան և վերադարձի ճանապարհածախքը վճարում է եկեղեցին։

Դիմել՝ Мелитополь (Таврич. губ.), Армянскому священнику Мамиконянцъ.

699. 3—1

Թաւրիզի թեմական դպրոցի համար հարկաւոր է մի փորձված, բարձրագոյն կամ միջնակարգ կրթութեամբ,

ՈՒՍՈՒՑԻՉ,

որը պէտք է աւանդէ մաթեմատիկական առարկաներ Գ—Զ դասարաններում՝ 15 ժամ, և ռուսաց լեզու Ե և Զ դասարաններում 8 ժամ։ Դասավճարն է 55 ռուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն Թաւրիզ, դպրոցի տեսուչ Կ. Պօղոսեանին մինչև օ.

694. գոստոսի 10-ը։ 5—1

Թաղարեցի ՏԱՃԱՏ Ալ. ԽԱԼԱԹԵԱՆԻ, լինելով իմ գործակատարը, յունիսի 24-ին յանձնեցի նրան 250 ռուբլի, որ գնայ կայարան ապրանքի քրէէ վճարի։ Ապրանքը չէ ստանում, դուբլիկատը թողնում է կայարանում, իսկ փոքը վերցնում է ու փախչում։ Իշխանութեանը յայտնված է։ Ով նկատեցնէ ճանաչէ և յանձնի իշխանութեանը—ինձանից կը ստանայ վարձատրութիւն 20 ռուբ.։

Աւագ Մելիք-Մկրտիչեանց

693. 2—1

STEH BIERHALLE-Ի ԿՈՂՄԻՑ

(Վերայի զառիվայր, տ. Մելիք-Ազարեանցի)

Ընդարձակելով բնակարանը և հրաւիրելով խոհարարի, Steh Bierhalle-ը հնարաւորութիւն ունի յարգելի յաճախորդներին առաջարկել ոչ միայն գարեջուր և սառը նախաճաշիկ, այլ և տաք կերակուր՝ ոչ թանգ 25 կոպէկից իւրաքանչիւր բաժինը, ըստ որում յայտարարվի ամենօրեայ եմ, որ ամեն օր «Знакъ Тифлиса» լրագրի I էջի վրա կը յայտարարվի ամենօրեայ «մենիուն»։ Steh Bierhalle-ը բաց է մինչև գիշերվայ ժամը 2-ը և ամեն ժամանակ ունի մաքուր, դուրեկան և էժան գարեջուր ու նախաճաշիկ. բացի այդ՝ յաճախորդների զբաղմաքուր համար ստացվում են տեղական և ռուսական լրագիրներ։

Ցարգանքով՝ Steh Bierhalle

698. 4—1

(հ.)

95 ԿՕՊԷԿՈՎ

ՄԵԾ ՀԻԱՅՄՈՒՆՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ